Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՅԱՆ

(ՄԻԱԲԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ)

ՔՆԱՐ ՀՈՎՎԱԿԱՆ

ՍԱՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ—1991

Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը (Ներսես Վանական) Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետն է, ճանաչված հոգևորական:

Ծնվել է 1937-ին Կիլիկիայում, որտեղից ընտանիքով գաղթել է Բեյրութ, սովորել Բեյրութի Նուբարյան հայկական վարժարանում, Անթիլիասի դպրեվանքում, այնուհետև՝ կենտրոնական բարձրագույն վարժարանում: 1957-ին եկել է հայրենիք: Ուսումը շարունակել է Մայր Աթոռի հոգևոր ճեմարանում, որն ավարտելուց հետո ուսանել է Անգլիայում, «Հարության քոլեջի» աստվածաբանական բաժնում, ապա Ժնևի «Էկումենիկ ինստիտուտում»:

Վարել է հոգևոր ճեմարանի տեսչի պաշտոնը, հետագայում հրավիրվել Շվեյցարիա իբրև հայ համայնքի հոգևոր հովիվ: Տարիներ շարունակ եղել է հայ եկեղեցու Անգլիայի թեմի առաջնորդը: 1983 թվականից Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոնական կոմիտեի անդամ է:

Նրա բանաստեղծությունների «Տեսիլք հավերժական» և «Հավերժ պատարագ» ժողովածուները լույս են տեսել Վենետիկում:

Ճրագ հավատո

ՏԵՍԻԼՔ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ

Ամեն գիշեր ուշ ժամերին,
Երբ ննջում էր աշխարհն համայն,
Նա ծնրադիր ու մտածկոտ,
Վաղարշապատ քաղաքից դուրս,
Հնձանի մոտ կամ ջրհորի
Աղոթում էր պաղատագին,
Հիշում կույսերն անմեղ, անբիծ՝
Հավատի զոհ սուրբ Հռիփսիմյանք,
Անմահ Բանին մատակարար
Լուսավորիչ զույգ Առաքյալք:
Լոկ աղոթք չէր և կամ խնդրանք
Նրա խոսքը հոգուց բխած,
Չէր երախտիք նրա համար,
Որ ինք փրկվեց Խոր Վիրապից:
Դա ծարավն էր, տոչորումը
Իր Տիրոջ հետ հաղորդության,
Որ բերում էր նրան այդտեղ
Ամեն գիշեր այդ ուշ ժամին:

Եվ մի գիշեր, երբ խավարն էր
Պատել չորսդին, աստղերն երկնի
Տարօրինակ մի ճաճանչով
Փայլում էին պսպղագին,
Երբ ամեն կապ հաղորդության
Կտրվել էր երկրի վրա,
Եվ աղոթքով երանական
Նա տարվել էր ու վերացել,
Հանկարծ զգաց, որ ինք մասն է
Զվարթնոց դասին և ոչ մարդկանց:
Ճիշտ այդ պահին, բաց երկնքում
Աստղերն ամեն խմբվեցին,
Լույսն հավաքվեց և դարձավ ծով,

—Լուսաճաճանչ մի լուսարձակ՝
Երկնից երկիր շողարձակված։
Եվ այդ պահին երկնի հրեշտակք
Համանվագ ու քաղցրալուր
Երգն երգեցին, բյուր օրհնություն
Բերին աշխարհ նիրհող մարդկանց՝
Մեծին, փոքրին ու բոլորին։
Լույսն առավել պայծառացավ,
Կարծես բացվեց մի պատուհան
Երկնի վրա լուսապայծառ,
Եվ այդ լույսի հեղեղի հետ
Իջավ աշխարհն Այրարատյան
Աստվածորդին ոսկեպսակ,
Աստվածորդին այն փառահեղ,
Պերճ զգեստով՝ ոսկի, արծաթ,
Բեհեզներով ազնվական,
Հազար ակամբ՝ զմրուխտ, հակինթ։
Իջավ աշխարհն Այրարատյան
Ու իր ձեռքի ոսկի ուռամբ
Բախեց գլխին ժանտ վիշապի։
Սանդարամետը դղրդաց,
Եվ աստվածներն հին կրոնի
Ու մազդեզի վառ ատրուշանք
Դարձան մոխիր ու ավերակ,
Դարձան անցյալ ու հիշատակ։

Խոսեց Արքան տիեզերքի՝
Լուսավորչին Հայաստանի.
«Վայրն այս սուրբ է իմ իսկ իշմամբ
Եվ հաճությամբ, կառուցի՛ր տուն
Դու պաշտաման՝ վերածնված
Փոքրիկ հոտին քո Հայկազյան»։
Եվ այդ պահին, բաց երկնքում
Ուրվագծվեց լույս շողերով
Նախատիպը Մայր Տաճարի

Աչքի առջև Տեսանողի։
Հավատքի հայր Լուսավորիչն
Զգլխանքից երանական
Երբ սթափվեց, երեք անգամ
Խաչակնքեց ու ծնրադրեց,
Որ Տերն իրեն արժանացրեց
Կենդանությանը հաղորդվել
Աստվածային սուրբ խորհրդին,
Հավերժական այս տեսիլքին։
Պալատն ամբողջ քնել էր խոր՝
Մեծ տեսիլքին նա անհաղորդ.
Պահակները ննջել էին
Տոթ գիշերվա մեղկ թմբիրով։
Ոչ ոք եղավ ականատես,
Ոչ ոք եղավ ունկամբ վկա
Մեծ տեսիլքին այս աննման,
Բացի մեկից՝ Լուսավորչից։

Պալատ մտավ Լուսավորիչն
Առավոտյան վաղ, քան արփին,
Փոխվել էր նա, պայծառացել,
Նոր ավյունով գեղեցկացել։
Հայոց արքա Արշակունի
Մեծ Տրդատին նկարագրեց
Տեսիլն աահեղ ու փառավոր
Նախորդ գիշեր իրեն շնորհված։
Ծնկի իջան հայոց արքան,
Արքայազունք պալատական
Եվ ուխտեցին փութանակի,
Ժողովրդով միասնական,
Կերտել տաճար մի սրբազան,
Ի հիշատակ Աստվածածնի՝
Սրբուհի մորն աստվածպարգև
Տյառն Հիսուսի՝ «Էջմիածին»։

Այն օրվանից մինչև այսօր,
Հազար և յոթ հարյուր տարի,
Ժամանակը սլանում է
Առանց կանգառ ու դադարի.
Կառուցվում է տաճարն այս հին
Մեր թշնամյաց ավերներից:
Կառուցվում է հավերժական
Տաճարն հայոց ամբողջ ազգի
Զեռամբ մեն մի գահակալի
Լուսավորչյան Սուրբ Աթոռի:

Ու տե՛ս, որդի հայկյան զարմի,
Դու՝ ժառանգորդ թանկ ավանդի,
Սուրբ Գրիգորն ու մեր նախնիք
Կառուցեցին տաճարն այս սեգ:
Նա չեղավ լոկ ամրախարիսխ
Ու նյութեղեն մի կերտվածք,
Նա եղավ սյո՛ւն, ոգո՛ւ տաճար,
Մի նոր կյանքի կանչող տապան:
Դու ծնվեցիր նրա ծոցում,
Դարձար որդին վերածնված
Նոր Սիոնի, դարձար վկան
Քո հավատի, պայծառացար,
Ժանտ թշնամու սրի դիմաց
Կուրծքդ դրիր, չվախեցար:
Քանի՞ անգամ մեռար փառքով
Ու թաղվեցիր, բայց միշտ հարյար,
Դարե ի դար ուխտի եկար,
Քո հայրենյաց փառքով սնար
Եվ ուխտեցիր փառքն հայրենյաց
Պահել բարձր, սուրբ ու անբիծ
Եվ փոխանցել այն անաղարտ՝
Սերունդներին մեր հայրենյաց:

Փետրվար 1986

ՀԱՎԵՐԺ ԵՐԱԽՏԱՎՈՐԻՆ

Ես՝ ուխտավոր Օշականի սուրբ Մեսրոպի գերեզմանին,
Երախտագետ սրտով խոնարհ՝ վերհիշելով եմ ես քայլում
Ոտաբոբիկ, փուշ ու տատասկ, խիճեր և խութ անտեսելով,
Իբր ուխտավոր հուղարկավոր, քայլում եմ ես հին ճամփեքով:

Վերհիշում եմ այն օրերի վիշտն անամոք, կսկիծը խոր,
Երբ քեզ տարան Ամատունյաց գյուղն Օշական՝ հողին տալու,
Այն օրերին երկինքն հայոց մթագնել էր սև ամպերով,
Միակ լույսը՝ հույսի խորհուրդ քեզ հովանի խաչն էր երկնի:

Այրարատյան լայնարձակ դաշտն ամայացել, դալկացել էր,
Ձմռան նինջով քնել էին ծառեր ու թուփ, դաշտ ու ձորեր,
Ճամփի եզրին, շեների մոտ հավատավոր հայորդիներ
Վերջին հարգանքն էին տալիս՝ խոնարհ գլխով հուղարկավոր:

Եվ թափորի շարքը արագ, ալիք-ալիք խտանում էր.
Թափորապետ Հայրապետի շուրջ բոլորված վանականներ
Աղու ձայնով երգում էին քո իսկ գրած շարականներ,
Սգո մռայլն էր տարածում թևերը իր՝ սրտերում խոր:

Ո՞վ իմանար, Հացեկացի, քո գնալով՝ գալիս էիր,
Տվել էիր մեզ մի զրահ հաղթահարող ահը չարի,
Նենգ թշնամու դեմ համառող, քաղաքակիրթ ազգաց շարքում
Մեզ հաստատող, մեզ սնուցող, կյանք պարգևող այս աշխարհում:

Գունդ-գունդ եկել խմբվել էին ահել-ջահել երկու սեռից,
Ծրջապատել հազարապետ Ամատունի իշխանն հայոց,
Նրա կողքին մատուցելու հարգանքն վերջին մեծ ուսուցչին՝
Դարե ի դար մեզ սնուցող ժողովրդի անմահ զավկին:

Տարոն գավառ, գյուղ Հացեկաց և մի խրճիթ, հայրը՝ Վարդան.
Փոքր Հայքի լեռների մեջ բերրի հովտաց դու բալասան,
Ծնվեցիր հեզ զերթ շինական, հոգով՝ վսեմ, ազնվական,
Ուսումնական բարձունք հասար, դարձար խոհեմ զինվորական։

Արշակունյաց գահն էր ընկել, աշխարհն հայոց բաժանվել էր
Երկու մասի, ընդմեջ հզոր պարսիկի և Բյուզանդիայի,
Երկիրը մեր գերի դարձել, ստրկացել զույգ ազգերին,
Եղել, ավա՜ղ, կովախնձոր անտիրական և անիշխան։

Համոզվեցիր կյանքի փորձով, որ զենքը չէ հույսը հայի,
Թագավորին իբր քարտուղար՝ ճանաչեցիր վիճակն ազգի,
Որ հայն ապրի պիտի միայն թշնամյաց մեջ նենգ, տիրական,
Մշակույթով իր սեփական՝ միության իր իբրև խորան։

Լքելով զենքն ու համազգեստն զինվորական, դու ընտրեցիր
Սև պարեգոտն ու կնքուղը վանականի և մերժեցիր
Կյանքի շպար ճոխությունն ու հաճույքները անցողական,
Նվիրվեցիր ողջ էությամբ մեծ տեսիլքին հավերժական։

Ողջ աշխարհում թափառեցիր, աղոթելով դու երկնեցիր,
Գիշերներդ լուսացրիր, շնորհի լույսդ բազմացրիր,
Գիրը բերիր դու Դանիելի հայոց լեզվի հնչման համար,
Թերի գտար, ստեղծագործ կամքով կրկին դու ճգնեցիր։

Աստղերի մեջ որոնեցիր գիսավորներ հրաշալի,
Մեն մի շեշտին, մեն մի ձայնին դու ձև տվիր զարմանալի,
Աստղերն երկնից երկիր բերիր, լուսապսակ դու կազմեցիր,
Դրիր ճակտին քո իսկ ազգի և քո փառքով պսակեցիր։

Հրաշքն արդեն կատարվել էր, հավատն արդեն ընձյուղ տվել,
Տարիների տենչդ ահա դարձել էր գիր, դարձել հնչյուն,
Դարձել էր շեշտ ու այբուբեն, մեր քարավանն առաջնորդող
Սյուն լուսեղեն, ամպ լուսավոր, գիշերը մեր ցերեկ դարձնող։

Փառքով եկար դու Հայրենիք՝ հայոց աշխարհն Այրարատյան,
Իջար փառքով դու երկնքից զերթ մանանա ամենահաս,
Քո լծակցի՝ սուրբ Սահակի հետ հիմնեցիր նոր ճեմարան,
Հպար քիմքին սերունդների անմահության գինով բուրյան։

Երկփեղկված Հայաստանում նորոգ կյանքի շունչը փչեց,
Ձմեռն անցավ, հուսալքված սիրտը հայի զարթնեց քնից,
Փառքը գյուտի սփռվել էր ողջ տարածքով մեր աշխարհի,
Վերանորոգ կյանքն էր լցվել աշխարհաշեն նոր տեսիլքի։

Բացվել էին ամենուրեք վարժարան ու դպրանոցներ,
Եվ սերունդներն եկել էին հագենալու առանց խտիր,
Այն օրվանից մեր մայրենին՝ լքված, անզոր ու անպաշտպան,
Դարձավ ջահել, քնքշանքով լի հարսն երկնատուր հայ գրերի։

Արևավառ հողն հայրենի— սխրանքների առկայծ օրրան—
Գյուտի փառքով վերածնվեց, իր վրայից նա թոթափեց
Խավարն իբրև մաշված զգեստ, հագավ կյանքի նոր պատմուճան,
Նոր շորերով պճնազարդվեց, հավերժության ուղին հարթեց։

Մեր դպրության վարդապետներն՝ Եզնիկ, Հովսեփ և Եղիշե,
Մովսես Քերթող, Անհաղթ Դավիթ փիլիսոփա և շատ շատեր
Եռամեծի շուրջն հավաքված՝ սկիզբ դրին թարգմանության՝
Կյանքի մատյան, կյանքի տվիչ աստվածաշունչ Բանին անմահ։

Աստվածաշունչ գրքի կողքին փութանակի թարգմանեցին
Բազում գրքեր իմաստության վարդապետաց աստվածաբան:
Եվ ուսուցին, սերմանեցին, լուսե անձրև երկնից բերին,
Հայկյան զարմի որդիների մտքերն լույսով ողողեցին:

Առաքելոց արյամբ ցողված Եկեղեցին Հայաստանյայց
Լուսավորչի հավերժական տեսիլքով էր լուսակերտված.
Գիտության լույսն առատացավ, երբ Մաշտոցի շունչը դիպավ,
Եկեղեցու սուրբ խորանի ջահն առավել պայծառացավ:

Դարեր անցան, ձիգ ու դժվար, տխուր ու մութ դարեր ցավի,
Աշխարհն հայոց քանի՞ անգամ դարձավ կրկես մութ ուժերի,
Զարմանում եմ քո տաղանդով և քո գյուտի խոր արժեքով,
Հիանում եմ գյուտի փառքը կերտող հայով՝ սուրբ Մեսրոպով:

Քո իսկ կերտած գիրը պահեց ազգը հայոց մեր հայկազյան,
Գիրը պահեց հավատը մեր, ինքնությունը մեր անսասան,
Գիրը վերցրեց, մեզ բարձրացրեց, դարձրեց հատու իմաստության,
Գրով կնքվեց անունը քո անջնջելի մեջ պատմության:

Ո՞վ վարդապետ, քո տեսիլքի արգասիքով՝ այբուբենով,
Դու փրկեցիր ազգը հայոց հար ուծացման վտանգներից,
Փառքն անցյալի ճանաչելու, ինքնակերտման ճամփա բացիր,
Մեզ ուսուցիր սիրել վսեմն ու կատարյալն առանց խտիր:

Ո՞վ եռամեծ մեր վարդապետ, սրբագույնդ հայ սրբերի,
Ասա՛, խնդրեմ, գյո՞ւտն էր հրաշք քո ստեղծած հայ գրերի,
Թե՞ տեսիլքը գյուտի ճամփով հայոց ազգի հավերժացման,
Ո՞վ ուսուցիչ իմաստնագույն, խորագետ ու հավերժական:

Ես՝ այցելու և ուխտավոր Օշականի գերեզմանին,
Հետևում եմ վերջին երթիդ: Սգավոր չեմ, հա՛յր իմ անգին,
Վերհիշելով անցյալը մեր քայլում եմ ես մտամոլոր,
Փառքիդ լույսով պայծառացած երախտավոր մի ուխտավոր:

Ծաղկել են, արդ, ճամփաները նվիրական Օշականի,
Ճոպողում են քո գրերով որդիներդ Հայաստանի,
Ե՛կ վերստին, փառքդ հայոց, մեր լեռներից հուշիկ իջի՛ր,
Լույսերի ծով մեր աշխարհում օրհնաձիր Աջդ տարածի՛ր:

Նախճիրն անցավ մեր երեկվա, եկան կյանքի ծաղկուն օրեր,
Շատ կոռնկներ վերադարձան, վերագտան իրենց բույներ,
Խինդով լցվեց երկիրն հայոց, խոխոջն առվի օդը լցրեց,
Խաղաղության ձայնը հնչեց, աշխատանքով կյանքը զուգվեց:

Ո՛վ առաքյալ երկնապարգև, անզուգական մեր առաջնորդ,
Դու հայ հողից ծնված ընծա, ծառ լիառատ և պտղառատ,
Դու՝ խտացումն հայ հանճարի, լուսարձակ մի՛տք դարերի մեջ,
Դու՝ զարդարուն շնորհներով աստվածատուր մեծ ուսուցիչ:

Որքան ձգվեն դարերն երկար, մեծանում ես, պայծառանում,
Վեհանում ես, իմաստնանում, որքան միտքն է մեր զարգանում,
Դու լույս էիր խավարի մեջ, և լույսը քո պայծառացավ,
Դարե ի դար շքեղացավ, անհաս փառքի արև դարձավ:

Փետրվար 1987

«ՄԻ՛ ՄԵՐՁԵՆԱՐ ՅԻՍ»...

Կանգնած եմ ես աղոթքի,
Ես ու մեղքերս՝ կողք-կողքի,
Ո՞րն եմ ես, կամ ո՞րն է նա,
Ծփոթվել ենք, խառնվել...

Մերթ ելնում եմ վեր, երկինք,
Սրբության հետ հաղորդվում,
Մերթ իջնում եմ վար, երկիր,
Հոգիս տիղմին թաթախում...

Երբեմն թեթև ու անհոգ
Սավառնում եմ երկնքում,
Կարծես լինեմ մի հրեշտակ
Անմեղ, թեթև, թափանցիկ:

Մտածում եմ, մոլորուն,
Եվ պատասխան չեմ գտնում.
Գուցե մեղք է, սայթաքում
Երջանկության վայելքն էլ...

Վայելքն էլ է մի հեշտանք,
Զգացական մի պատրանք
Հոգին խնկով պարուրող,
Մարդուն հույսով օրորող...

Ինձ թվում է՝ այս կյանքում
Բնության կամքն է իշխում,
Ինչ որ դուրս է օրենքից,
Մեղք է ծանր՝ կապարից:

Գեթսեմանի պարտեզում
Հարուցյալն էր պատգամում.
«Մի՛ մերձենար», մի՛ հպիր
Ինձ դու հողե մատներով:

Նոյեմբեր 1988

ԽՈՀ ԾՆՆԴՅԱՆ

Դարեր առաջ, շատ առաջ, Բեթղեհեմի դաշտերում
Իրենց հոտի պահապան պարզ ու խոնարհ հովիվներ
Զարմանքով լի դիտեցին աստղն անսովոր երկնքում,
Մինչ հրեշտակներն հնչեցրին մեծ ավետիսն երկնային:

«Խաղաղություն երկրի վրա, փառք երկնքում Աստծուն
Եվ մարդկանց մեջ՝ հաճություն», պատգամն այս էր ամենքին.
Հազար շեփոր հնչեցրին, փառաբանանք երգեցին,
Ջյան պես աշխարհը ծածկեց շնորհն առատ, երկնային:

Մանկացել էր ինքն Աստուած Բեթղեհեմի մսուրում,
Միսիթարանք էր բերել նա հուսաբեկ սրտերին,
Սեր էր բաշխել իբր ավանդ՝ ցանկանալով, որ նրանք
Սիրեն ոչ լոկ ընկերոջ, այլ՝ թշնամուն ևնգ, անարգ:

Գիշերվա ահն մոռացած՝ հովիվները դիմեցին
Դեպի քաղաքն Բեթղեհեմ, դեպի մսուրը լուսե,
Ուր Փրկիչն էր լուռ ննջում՝ խանձարուրով պարուրված,
Եվ սիրակաթ ծնողներն հսկում էին շնորհազարդ:

Արդարության պատգամով, խաղաղության դրոշով,
Ծնվեց Փրկիչն աշխարհի խոնարհության քարոզով,
Եվ նա դարձավ անմահ խոսք, կորուսյալին լույս դարձավ,
Դարձավ հրաշք անսովոր և մանանա երկնավոր:

Իբրև նշան իր սիրուն՝ տածած համայն մարդկության,
Խաչի վրա նա հեղեց թանկ արյունն իր փրկարար,
Հաղթեց մահվան իր մահվամբ, մահվան վճիռը պատռեց,
Աստուծո և մարդկության միջև նոր ուխտ նա կնքեց:

Աչքերս երկինք եմ հառել ես օգնության աղերսով,
Որ աստղն երկնի հայտնվի երկրորդ անգամ իր ցոլքով,
Մեր խավարը վերածի լուսաճաճանչ ցերեկի,
Փոխան նրա մանկանա մարդկությունը նոր դարի:

Հոկտեմբեր 1986

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ

Խորհրդովդ այսօր իմ սիրտն եմ լցնում,
Մտովին թռչում, քեզ եմ միանում,
Սրովբե հողեղեն, վկա Քրիստոսի,
Փորձում եմ շնչովդ պարուրել հոգիս:

Դարերի խորքից հնչող քաղցր կանչ,
Կենդանի քարոզ և անանց ղողանջ,
Հոգով՝ բարեգութ, խղճով՝ զգայուն,
Վերուստ ստացված բաշխվող բարություն:

Դարեր շարունակ քեզ ուխտի եկան
Ծարավ հոգիներ, շնչովդ ճոխացան,
Քանիսնե՞ր քեզնով նոր կյանք ստացան,
Անանուն ցավով բալասան գտան:

Քանի՞ հպարտներ քո տեսքը խոնարհ
Արհամարհեցին, ծաղրել փորձեցին,
Երկնատուր ուժը հոգուդ վեհության
Զգետնեց նրանց իսպառ, հավիտյան:

Նոյան տապանին հասնել ցանկացար
Եվ բազում անգամ Մասիս բարձրացար,
Որպես պատասխան քո վեհ ցանկության,
Ստացար պսակ փայտից փրկության:

Դու աստվածային աննման բարության
Հավատում էիր տենչանքով վառման,
Նոյան տապանի փայտից ստացար,
Փրկության խաչի նախատիպն գտար:

Ո՞վ դու հրաշագործ և երանելի
Հողեղեն հրեշտակ, մարմնեղեն սրովբե,
Անցել են դարեր, շողա՛ շարունակ,
Փոթորկոտ կյանքում փարո՛ս լուսարձակ:

Տո՛ւր քո հավատի կայծից ամենքին
Կյանքի ալեկոծ այս տարիներին,
Տո՛ւր խաղաղություն համայն աշխարհին,
Նավապետն եղիր մեր նկուն նավի:

Դեկտեմբեր 1986

ՏԻՐԱՄԱՅՐ

Գեղեցկություն լուսաշող...
Աչքեր ծավի, ծով ծիծաղ,
Քաղցրահնչյուն մեղեդի,
Լույս հորիզոն հույսերի:

Ունքեր՝ կամար հրեղեն
Գալիք փառքին դիմավոր,
Գունեղ գոտի ծիրանի,
Կյանք ու երազ՝ կողք-կողքի:

Շուրթեր՝ թերթեր վարդերի,
Ցողով շաղված վաղորդյան.
Ոչ մի խոսք դեռ չի եղծել,
Կուսական գեղն աղարտել:

Այտեր՝ մարմար լուսերանգ,
Ճերմակ, մաքուր, թափանցիկ,
Ուր, իբրև կյանք ու խայտանք,
Փթթող ժպիտդ է շոյանք:

Չկա շպար երկրային
Համեմատվող քո գեղին,
Աստվածային քո տեսքին,
Քո կատարյալ էության:

Օգոստոս 1988

ՀՈԳԵՎՈՐ ԽՈՀԵՐ

Պատարագվող Գառն Աստուծո,
Վասն մարդկան ամենայնի՝
Կենդանյաց և հանգուցելոց,
Ընդ ամենայն ժամանակի:

Խունկ քաղցրաբույր աշխարհ լցնող
Սիրո անմար վառ կրակում,
Կամուրջ՝ կապող երկինքն երկրի
Եվ ծիածան խաղաղության:

Անեծքը հին, մեր հայրերի
Սև խարանով դրոշմված,
Մեր ճակատից առհավական
Իսպա՛ռ ջնջիր քո սուրբ արյամբ:

Թեթևացրո՛ւ բեռն իմ մեղքի
Շնորհաձիր հպմամբ ձեռքի,
Որ մաքրությամբ ներկայանամ,
Քո սուրբ տեսքին արժանանամ:

***

Դո՛ւ՝ Գառ անարատ և զոհ գերագույն,
Վասն քավության թափված թանկ արյուն,
Հեղվի՛ր վերստին և սրբագործի՛ր,
Իմ ծանրաձանր մեղքերը քավի՛ր,

Տե՛ր, ինձ շնորհի՛ր վայելքն անբասիր
Մարմնո և արյան քո հաղորդության,
Եվ պատարագվող քո զոհողությամբ
Լցվեմ հոգևին, ոգեղենանամ:

Կենարար սիրո բոցը հրդեհի՛ր
Անհաղորդ սրտիս խոր գավիթներում,
Փշրի՛ր սառույցը իմ մեռելության,
Հաստատի՛ր հավատս հանդեպ մարդկության:

Դո՛ւ լո՛ւյս առաջին, մա՛յր իմ գոյության,
Լո՛ւյս անծայրածիր, լո՛ւյս ճշմարտության,
Հավերժական լո՛ւյս անսահմանափակ,
Անբիծ, անսքող, անարատ, հստակ:

Բա՛ց շամանդաղը աչքիս կուրացյալ,
Նայող՝ չտեսնող, տեսնող՝ չզգացող,
Որ տեսնեմ, զգամ անիմանալին,
Հոգու աչքերով փարվեմ Էությանդ:

***

Սրբերի սուրբն ես անաղարտ, մաքուր,
Մեղավոր անձիս վերքերն ամոքի՛ր,
Չար խորհուրդներից իմ միտքն ազատի՛ր,
Մաքրության քողով դու ինձ պարուրի՛ր:

Թշնամու խոցող նետերից փրկի՛ր,
Լեզվից բամբասող ինձ հեռո՛ւ պահիր,
Անձն իմ զրպարտված դու արդարացրո՛ւ,
Լույսն արդարության իմ մեջ փայլեցրո՛ւ,

Դարձրո՛ւ ինձ ժառանգ հոգևոր գանձին
Մեր սուրբ հայրերի առաքինության,
Բռնի՛ր իմ թևից, ոտս ուղղի՛ր հողդողդ,
Որ չսայթաքեմ-կորչեմ անհաղորդ:

Տե՛ր, կա՞ միթե մարդ անմեղանչական,
Մեզ է հետևում մեղքն իբրև դարան,
Դո՛ւ՝ լույս անստվեր, անբիծ, անխափան,
Օ՜, քեզ մոտ չկա ճշո՛ւյլ թերության:

***

Աղոթում եմ քեզ վասն մեր նեղչի,
Նենգ, դարանակալ, չար ախոյանի,
Որ հաճախ է դեմքն իր բացահայտում,
Եղբայրների մեջ խռովք հարուցում:

Օժտի՛ր բոլորիս միաբանությամբ,
Լցրո՛ւ մեր սրտերն քո զոհողությամբ,
Թույլ մի՛ տուր հանկարծ սայթաքենք, ընկնենք
Եվ կորչենք հավետ՝ քեզնից անժառանգ:

Տո՛ւր մեզ, Տե՛ր, սիրուդ բաժակն քաղցրության,
Համեմի՛ր շրթներն մեր իմաստությամբ,
Խոսքիդ զորության շնչով տոգորի՛ր,
Քո անշեջ սիրո բոցով մեզ թրծի՛ր:

Դարավոր վանքի կամարների տակ,
Մեր նախնյաց ուխտին բոլորով գիտակ,
Ժառանգո՛ղն արա շնորհացդ անպարփակ,
Որ հասնենք պսակիդ ուխտով անսայթաք,

Դեկտեմբեր 1986

Ա Ղ Ե Ր Ս

Սուրբ Ֆրանցիսկոսի հետևողությամբ

Խաղաղության քո, Տե՜ր, լինեմ ես ռահվիրան,
Սե՛ր տարածեմ՝ փոխարենը ատելության,
Ու տխրության մռայլ պահին՝ ուրախություն:
Սև կասկածի հողում հավա՛տ ես սերմանեմ,
Անհաստության դառը պահին հո՜ւյս ներշնչեմ,
Խարխափողին խավարի մեջ ես լո՛ւյս լինեմ:

Տո՜ւր զորություն, որ հավատով հավե՛տ ձգտեմ
Մխիթարել՝ մխիթարվել ցանկալու տեղ,
Ճիշտ հասկանամ՝ հասկանալի լինելու տեղ,
Աղերսելու փոխարեն սեր՝ մարդկա՛նց սիրեմ:

Տալո՛վ է, որ տրվում է, Տե՛ր, մեզ անսահման,
Ներելով է, որ քավվում են մեղքերը մեր,
Եվ մեռնելով վասն հայրենյաց՝ նո՛ր ենք ծնվում,
Անմահության երջանիկ կյանքն ենք ժառանգում:

Խաղաղության քո, Տե՛ր, լինեմ ես ռահվիրան ...

Հունիս 1986

ՔԱՐԵ ԱՂՈԹՔ

Որքա՜ն համբույր կա կնքված քո ճակատին,
Խաչքա՛ր խոհուն, քարե աղոթք ու սրբություն:
Որքա՜ն աղերս ու պաղատանք կա թաքնված
Քո խորշերում, խաչքա՛ր հույսի՝ սիրով ցողված:

Քարակերտյալ դու ներշնչանք, հույսի կոթող,
Մութ խավարում սիրո լապտեր պլպլացող,
Անմահ Փրկչի հաղթող նշան դու շողարձակ,
Կյանք զգեցած դու մեր հավատ՝ քարե քանդակ:

Խոնարհվում եմ ես քո առաջ և ծնրադրում,
Զարն զգետնող խորհրդանիշ դու փրկության,
Սյուն չես բնավ անարգանքի ու պարտության,
Այլ հարության շունչ ես ծաղկուն կյանքով բուրյան:

Համբուրելով քեզ բյուր անգամ ես ծնրադիր՝
Համբուրում եմ հայ վարպետի ձեռքը ճարտար,
Տե՛ր, այդ ձեռքում որքա՜ն հավատ դու խտացրիր,
Որ արարեց քարից աղոթք, խաչն այս թրթիռ:

Ապրիլ 1988

ԱՂՈԹՔ ԱՌ ԷՋՄԻԱԾԻՆ

Ես՝ մեղավոր ու անցավոր,
Հազար անգամ ապաշխարող,
Սակայն երբեք չարդարացող,
Ես՝ մեղավոր մի ուխտավոր:

Ես՝ անկատար մի հողածին,
Չեմ հասնելու փառքիդ շուքին,
Հազար անգամ եմ սայթաքում,
Մեղաց ծովն եմ գահավիժում:

Ես՝ մի ընծա քո խորանում,
Մի կաթիլ խունկ քո բուրվառում,
Ձերթ քաղցր բույր թող սպառվեմ,
Գուցե այդպես գութիդ հասնեմ:

Մեղքն է, Տե՛ր իմ, ինձ հետևում,
Ինձ իջեցնում, հող է դարձնում,
Ո՞վ փառահեղ դու Սրբություն,
Դու ապրելով՝ կյանք ես դառնում:

Արդյոք, ընդոստ, փառքիդ շողից
Պիտի զարթնե՞մ մահվան քնից,
Արդարների դասում կանգնեմ,
Լուսափայլ տեսքդ վայելեմ:

Հոկտեմբեր 1988

ԱՎԱԳ ՇԱԲԱԹՎԱ ԽՈՀԵՐ

Ավագ հինգշաբթի

Այսօր դու նորից խաչ ես բարձրանում
Մեղքերի համար հանուր մարդկության,
Արյուն ես հեղում թանկ ու սրբազան,
Վճիռն պարտության փոխում հաղթության:

Քո աստվածային շնորհներն ամեն
Տվիր անսակարկ, առատ ու անծիր,
Իբրև սերմնացան հողին հանձնեցիր
Երկնավոր սերմեր հույսի, հարության:

Իբրև հաց կենաց դու երկնից իջար,
Բանին հոգևոր մատռվակ եղար,
Մարդկանց ցավերին, կույրին, բորոտին,
Ձերթ բժիշկ սրտցավ, հասար օգնության:

Որպես գառ անմեղ դու խոնարհվեցիր,
Փառքից Հայրական կամոք զրկվեցիր,
Իջար դու աշխարհ, մեզ նմանվեցիր,
Մեզ հավերժ կյանքի հույսով պճնեցիր:

Քո զոհողությամբ, Տե՛ր, մեզ ուսուցիր
Խորհուրդը սիրո և ողորմության,
Աշակերտներիդ ոտքը լվացիր,
Որպես գրավական քո խոնարհության:

Հուդան համբույրով քեզ Զարին մատնեց,
Երեսուն արծաթ դրանով շահեց,
Ստրուկն արծաթի՝ արծաթով գնվեց,
Մարմինն ու հոգին դժոխքում այրվեց:

Ատյանից ատյան քեզ քարշ տվեցին,
Զրպարտությունով դատապարտեցին,
Խաչ դրին ուսիդ, Գողգոթա տարան,
Ավազակաց հետ անարգ խաչեցին:

Ո՛վ ոտնահարված դու արդարություն
Եվ խաչ բարձրացված ո՛վ ճշմարտություն,
Հիսուսի թաղմամբ թեև թաղվեցիք,
Բայց հետո մահից հարություն առաք:

Կյանքում չարն է միշտ թվում տիրական,
Բայց արդարության կանչն է տևական,
Մահվան փոսի մեջ իսկ ճշմարտությունն
Չեն կարող թաղել մարդիկ վատանուն:

Այսօր դու նորից խաչ ես բարձրանում,
Իբրև մահապարտ սուրբ արյուն թափում,
Արյան լճակից ծիլեր են ծաղկում,
Կյանքով հաղթական աշխարհը լցնում:

Մարտ-ապրիլ 1988

ԱՎԱՆԴ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ

Տո՛ւր ձեռքդ դու ինձ, գնանք միասին
Դեպի լայնանիստ դաշտերն Երասխի,
Ուր հին օրերի փառքից հիշատակ
Մնացել են Դվին, Արտաշատ փլատակ:

Տե՛ս, հեռվում դաշտի հարթ կողից հանկարծ
Մարմարյա մի բլուր վեր է պլանում,
Այդ բլրի լանջին կա մի հուշարձան,
Մի կոթող հույսի՝ լուռ ու խոհական:

Ժամանակների անթափանց խորքից
Հասել է նա մեզ գերթ վկայարան,
Հուշարձան մահվան դեմ՝ հաղթանակի,
Կոթող նոր կյանքի, խորհուրդ հայ ազգի:

Խոր Վիրապն է այն, ուր նետվում էին
Դատապարտյալներ պատժի և մահվան,
Ուր քանի՜ մարդկանց հույսերն են խամրել,
Եվ քանի՜ կյանքեր անհուշ խավարել:

Խոր Վիրապն հիմա սարսափ չի ազդում,
Իմաստն է փոխվել բանտի և մահվան,
Դարձել լուսավոր խորհուրդ փրկության,
Բարձունք հաղթության՝ հետ տառապանքի:

Գնանք Խոր Վիրապ երկրպագելու,
Մինչ ճանապարհից ենք մենք տեսնելու
Երկու բարձունքներ, մին՝ խոնարհ, համեստ,
Մյուսը՝ վսեմ, երկնաքեր, հպարտ:

Բարձունքն երկնաքեր, վսեմ, խոհական,
Եղել է ազգիս պատմության վկան,
Խորհուրդ՝ վահանված ձյամբ բիբլիական.
Անհաս հորիզոն տենչին հայկազյան:

Խոնարհ բլուրն է բարձունք հոգևոր,
Ուր տառապանքով մեր հայրն երկրավոր.
Երկար տարիներ ապրեց աղոթքով՝
Իժերից բանտի անվնաս գոլով:

Հանապազօրյա հացն իր ստացավ
Հրեշտակի ձեռքից կնոջ կերպարով,
Աղոթեց, ճգնեց երկար տարիներ
Առանց տեսնելու արևի շողեր:

Ճգնեց, աղոթեց վասն մեղքերի
Հոր կողմից գործված՝ հանդեպ Խոսրովի,.
Թափեց արցունքն իր, լվաց իր հոգին,
Առանց զգալու սլացքն օրերի:

Բանտարկվել էր այս Խոր Վիրապում
Իբրև պատասխան իր հանդգնության,
Ձերկրպագելով Անահիտ աստծուն,
Կեղծ աստվածների նյութեղեն հույլին:

Միացել էր նա Տրդատ արքային,
Երբ սա մեծ փառքով, զորքով հաղթական,.
Եկել տիրել էր գահին հայրական
Եվ սարսափ ազդել թշնամիներին:

Տրդատն էր հուժկու, հսկա, հաղթանդամ,
Մարտեր էր մղել Հռոմում անգամ,
Հաղթական փառքի դափնիներ կորզել,
Հաղթանակներով թագն իր ամրացրել:

Ուսմամբ կեսարյան՝ Գրիգորն իմաստուն
Տրդատ արքայի բանակն էր մտնում,
Որպես քարտուղար ծառայում նրան,
Պարտքն իր կատարում հանդեպ ազգության:

Հաղթանակներից գինովցած արքան
Սարքում էր խրախճանք հեթանոսական,
Հրաման արձակում երկրպագության,
Բոլոր կուռքերին իրեն օգնական:

Ամեն կողմ զոհեր, գինի, խրախճանք,
Աշխարհն էր լցրել երգ, պար ու նվագ,
Պնդում էր արքան, պնդում անընդհատ
Զոհեր մատուցել կուռքերին հատ-հատ:

Բազում տատրակներ և աղավնիներ
Արձակում էին եթերում լազուր,
Շաղ էին տալիս երգ ու ծիծաղով
Աղբյուրի զուլալ ջուրն սթափեցնող:

Եվ գինարբուքի թեժ րոպեներին
Հիշում էր արքան համառ Գրիգորին,
Մատուցել նրան հրամայում էր
Կռոց ոտքերին եղջերվաց զոհեր:

Գրիգորն անհողդողդ, Մասիս սարի պես,
Հրամանն անտեսում, չէր շարժվում տեղից,
Մինչ կատաղում էր, մոլեգնում արքան,
Պատժի, տանջանքի տալիս հրաման:

Տաս պատիժներով՝ հասցնող մահվան,
Հրաման արձակեց, որ պատուհասեն
Համառ, ամբարիշտ իր քարտուղարին,
Կուռքերին զոհեր չմատուցողին:

Գրիգորն հաստատ էր, հավատով արի,
Խոսում էր անվախ իր նոր հավատի,
Ճշմարիտ Փրկչի՝ Հիսուսի մասին,
Եվ փորձում հասնել արքայի սրտին:

Իր որոշման մեջ անհողդողդ արքան
Առավել պատժի տալիս էր հրաման,
Իսկ տանջանքների ցավի մեջ Գրիգոր
Հայտարարում էր իր հավատը խոր:

Արքան զայրանում և կատաղում էր,
Որ պատիժներով ու ողջ ուժով իր
Չէր կարող անգամ հաղթել անզորին
Եվ ծնկի բերել համառ Գրիգորին:

Տաս պատուհասին հավատի ուժով
Անվերջ դիմադրում, ապրում էր Գրիգոր,
Հայտնում էր ապա, թե՝ «կենդանի է»
Ու Փրկչի սիրով նա տոգորվում է:

Արքայի ունկին հասնում է 22ուկ,
Թե Գրիգորի հայրն էր դավող Անակ:
Մոլեգնած արքան տալիս է հրաման՝
Բանտել Գրիգորին Վիրապում մահվան:

Վիրապն ահավոր՝ իժերով լեցուն,
Կորստյան գուբ էր հանցագործների,
Ուր հույսի ճրագն էր հավետ հանգչում,
Ուր մթին, անատող գիշերն էր իշխում:

Տարան Գրիգորին Խոր Վիրապ գցին,
Վիրապի դռան, որպես դամբարան,
Մոռացության ծանր մի քար գլորեցին,
Մահվան դատակնիքն այդպես կնքեցին:

Անցան տարիներ դարերի նման,
Իժերն ու օձերն ընտանի դարձան,
Սրբից հեռացան, էլ չմոտեցան,
Եվ գուբը դարձավ մի աղոթարան:

Մի նկան հացով, մի սափոր ջրով
Ապրում էր սուրբը նվազագույնով,
Աղոթում էր հար, հավատն առկայծում,
Աստծու շնչով էր մխիթարվում:

Եվ ամեն տարի, ըստ ավանդության,
Երկրորդ Ծաղկազարդ տոնին տերունյան
Ծոմապահությամբ դառնում արժանի
Հրեշտակի աչքով տեսլյանն Քրիստոսի:

Մայր հայրենիքում, Տրդատի օրով,
Կյանքն ընթանում էր խաղաղ ու բարօր,
Նա ամեն տարի ասպատակում էր,
Նվաճում, գավթում դրացի հողեր:

Հաղթանակներից արքան գինովցած՝
Ավարն էր խժռում մարմնով հղփացած,
Ապրում էր կոոց զոհ մատուցելով,
Իր բուռն կրքերի գերին դառնալով:

Հենց այդ օրերին եկավ սուրհանդակ,
Հռոմի գահից հասավ հրովարտակ.
Դիոկղետիանոս կայսրն էր մոլեգնել,
Կրքի հրդեհից իր սիրտն էր խանձվել:

Գրում էր կայսրը բյուր թախանձանքով,
Որ գտնեն կույսին, առաքեն փութով
Հռոմի գահի մեծ տիրակալին՝
Աշխարհասասան մեծազոր կայսրին:

Հայտնում էր ցավով, թե ինչպես ծածուկ՝
Իր ձեռքից թռավ հարսնացուն փափուկ.
Հարմար էր գահին մարգարիտն անգին՝
Իր մեղկ ցանկությանց երազ դիցուհին:

Տրդատ երբ փութով նամակն այդ կարդաց,
Ծանակեց մտքով, խորամանկ ժպտաց,
Վավաշոտ կայսրին նա վերհիշելով՝
Ծիծաղեց անհոգ հուժկու քահ-քահով:

Հեթանոս արքան Հռիփսիմեին
Առանց տեսնելու, կայսրի նամակի
Նկարագրությամբ էր սիրահարվել,
Հեթանոս կրքի ցասկությամբ լցվել:

Հրամայում էր փնտրել դիցուհուն,
Գտնելու դեպքում՝ այդ գեղեցկուհուն
Առանց կասկածի և երկմտանքի
Բռնել ու բերել պալատն արքայի:

Եվ ողջ երկրով մեկ լրտեսներ ելան
Ու որոնեցին մյուսների հետ նրան.
Գտան բոլորին մայրաքաղաքի
Պարիսպների մոտ, կողքին հնձանի:

Երեսուն և յոթ կույսեր աննման,
Տարբեր հասակի ու գեղեցկության,
Ուխտով միաբան, վարքով սրբանման,
Վառն Հիսուսի բուրող վարդաստան:

Երեսուն և յոթ կույսեր փափկասուն՝
Ընտանիքներից քաղված պատվական,
Քրտինքով իրենց հացն էին շահում,
Համատեղ ապրում, գործում, աղոթում:

Էին ընտրյալ և ազնվական
Դուստրեր համակամ՝ վասն արդարության,
Բողոքում էին ընդդեմ կուռքերի,
Ընդդեմ անբարո, հոռի բարքերի:

Օրեր, ամիսներ ճանապարհ անցել,
Եկել մեր երկրում էին ծվարել,
Բույն էին դրել նոր երկնքի տակ՝
Հեռու մեղքերից, ազատ, համարձակ:

Միառժամանակ նրանք ապրեցին
Երջանիկ կյանքով և քարոզեցին,
Քրիստոսի սիրո լույսը սփռեցին,
Այդ լույսով բազում սրտեր գրավեցին:

Պարարտ էին հողն, հանդերը բերրի
Հայոց աշխարհի բնակիչների,
Նետվել էր արդեն հունտը հավատի
Լուռ քարոզությամբ առաքյալների:

Գտան ընկերներ իրենց պես բարի՝
Կանչված կոչունքին մեծ հարսանիքի,
Երկրում ապրեցին երկնավոր սիրով
Եվ պայծառացան անանց շնորհով:

Ավա՜ղ, չերկարեց թելը օրերի,
Խուզարկու աչքերն արքա Տրդատի
Գտան կացարանն անբիծ կույսերի,
Կույսերի դշխո Հռիփսիմեի:

Օժիտներ տարան արքայի կողմից,
Ջոկեցին նրան կույսերի միջից,
Բերեցին պալատ, խնջույք սարքեցին,
Հարսանյաց առատ սեղան բացեցին:

Բակում պալատի, խնջույքով տարված,
Մինչ մոլեգնում էր խուժանը հարբած,
Ներսում արքան էր դեռ տիրել փորձում
Հարսին Քրիստոսի՝ կույսին փափկասուն:

Քրտնել էր արքան, հոգնել, սպառվել,
Փորձում էր ուժերն ի մի հավաքել,
Զգետնել կույսին, բռնանալ, լկել,
Կրքերն իր վայրագ այդպես հագեցնել:

Անարատ կույսը, կանացի, տկար,
Հզորացել էր ներքուստ առնաբար,
Վանում իրենից, գետին տապալում,
Ճիգերն արքայի ապարդյուն դարձնում:

Գազազած արքան հրամայեց բերել
Հոգևոր մորը բոլոր կույսերի,
Թելադրեց նրան, որ նա համոզի
Կամակոր կույսին դառնալ թագուհի:

Գայանեն անվախ չանսաց հրամանին,
Աներեր մնալ հորդորեց կույսին,
Մրմնջաց աղոթք, որ չարն անհետի,
Տիրոջ օգնությամբ կույսն հաղթանակի:

Մոլեգնեց արքան՝ լսելով նրան,
Լեզուն պոկելու տվեց հրաման:
Եվ խողխողեցին Գայանե կույսին
Աչքերի առջև համառ իր սանի:

Սրբի ու պիղծի մա՞րտ անհավասար ...
Հոիփսիմեն լցված ուժով անսպառ՝
Մարտերի վարպետ արքա Տրդատին
Զսպում, նվաճում, գցում էր գետին ...

Փախչում էր կույսը, փախչում, հեռանում,
Նվաճված քաջի պալատից գնում՝
Իր ընկերների հույլին միանում,
Երկնառաք ուժն իր նրանց հաղորդում:

Քիչ հետո, սակայն, զորքեր են գալիս,
Բռնում կույսերին, ցցերի կապում,
Խոշտանգում նրանց, ապա մորթոտում,
Զայրույթն արքայի՝ արյամբ են խեղդում:

Պատարագվում են կույսերն անարատ,
— Անարգ խնջույքի որոջներ անհաղթ —
Արյունն է թափվում հողում հայրենի,
Ակոսներ լցնում պայծառ գալիքի:

Պարտված արքան այնքան է փրփրում,
Որ պիղծ կենդանու տեսք է ընդունում,
Ձերթ խոզ մոլեգնած՝ պալատից փախչում,
Գնում անտառներ, ճահճուտներ մտնում:

Ինչքան էլ լինի մարդն անխիղճ, անսիրտ,
Ինչքան էլ լինի համառ, նենգ ու բիրտ,
Գալիս է մի պահ, երբ սիրտն է փափկում,
Դառնում զգայուն և խիղճը տանջում:

Արյան ճապաղիքն անմեղ կույսերի,
Զոհված սրբերի հայացքը բարի
Շարժել էր մի բան անիմանալի,
Ծաղիկ էր ծլել փոխան տատասկի:

Մտահոգ էին ռամիկ-շինականն,
Ե՛վ պալատականն, և՛ ազնվականն
Դառն ճակատագրով Տրդատ արքայի՝
Թշնամի ազգաց սարսափ ազդողի:

Հեկեկում էին Աշխեն թագուհին,
Խոսրովիդուխտը՝ քույրը Տրդատի,
Ողբում էին մահն անմեղ կույսերի
Եվ ճակատագիրն հիվանդ արքայի:

Փնտրեցին բժիշկ, դարման ու դեղեր,
Որ մեծ հիվանդի ցավը ամոքվեր,
Դարման չգտան ցավին արքայի,
Մինչ նա շրջում էր մեջ ճահճուտների:

Հայոց աշխարհում այնքան էր թափվել
Անմեղ սուրբ արյուն, որ խիղճը թմրել,
Հույզն ու զգացմունքն էին չքացել,
Բրտությունն էր սև թևն իր տարածել:

Կա՛նչ արդարության, արյո՞ւն հաղթության ...
Անմեղ կույսերի թափած սուրբ արյան
Կանչն աղաղակում, սրտեր էր լցնում,
Խիղճն էր արթնացնում, մեղքը՝ գիտակցվում:

Հենց այդ օրերին, երբ հեք կույսերի
Դիակներն անթաղ — ո՞վ հրաշք վերին—
Պահպանվել էին, նման նշխարի,
Անեղծ, անարատ, նոր լույս էր բացվել:

Ի տես չարիքի, անարդարության,
Բիրտ ու բռնակալ կամքի փոխարեն
Քարացած սրտերն էին փափկացել,
Ատելության տեղ սերն էր ընձյուղվել:

Հենց այդ օրերին երազ էր տեսել
Խոսրովիդուխտը. հրեշտակն էր հայտնել,
Թե Տրդատ արքան միայն կբուժվի
Զեռամբ Խոր Վիրապ նետված Գրիգորի:

Կրկնվեց երազն այդ քանի՞ անգամ ...
Երկյուղով լցված՝ նա գնաց այնժամ
Պատմեց թագուհուն և իշխաններին
Երազում տեսածն հույսով ցնծագին:

Օտա իշխանն էր գործավարն գահի.
Հապճեպ պատրաստվեց հետ համհարզների,
Շտապով գնաց բանտն Արտաշատի,
Ուր Սուրբն էր տանջվել տասնչորս տարի:

Ողջ արտաշատցիք անչափ զարմացան,
Երբ մարդիկ Սրբին փնտրելու եկան.
«Վաղո՞ւց է մեռած...», նրանք ասացին,
Օտա իշխանին մտքում ծաղրեցին:

«Ասացեք, ու՞ր է գուրը Գրիգորի»,
Գոռում էր իշխանն առանց դադարի:
Քարը հեռացրին բերանից գբի
Ու բոլորվեցին շուրջը դամբանի:

Տիրեց մի որպե սառը լռություն ...
Օդում ոչ մի ձայն և ոչ մի ծպտուն:
Լռել էր բանտը մահվան չափ խորունկ,
Աղոթքն էր կառչել պատերին տամուկ:

Ձայն տվեց Օտան հատ-հատ վանկերով,
Բարձր ու հստակ և արձագանքով.
Կրկնեց թավ ձայնով նորից՝ «Գրիգո՞ր...»
Եվ բանտը թնդաց ձայնից նրա գոռ:

Լռության միջից հազիվ մի շշուկ
Թույլ ու դյուրաբեկ, իբրև արձագանք,
Լսվեց ներքևից և հույս ներշնչեց,
Տխրամած սրտերն հուսով ողողեց:

Կրկին Օտան էր ժպտուն հայացքով,
Ձայնով աննկուն, խանդ ու եռանդով
Խոսում, հուսադրում և ոգևորում,
Ի տես հրաշքին՝ հրճվանքով լցվում:

Պարան իջեցրին գբի հատակին,
Շարժեց Գրիգորն այն երեք անգամ.
Ճիշն ուրախության մութ գուրը լցրեց,
Զարաղետ մահը կյանքից պարտվեց:

Իջան Խոր Վիրապ և վեր հանեցին
Երկար տարիներ անհետ կորածին,
Բանտի խավարը հոգու լապտերով
Լուսավորողին՝ մեծ Լուսավորչին:

Գունատ էր Գրիգորն, հյուծված ու մրոտ,
Հագին ցնցոտի, ոտները կթոտ,
Երերուն քայլքով հազիվ էր շարժվում,
Բայց աչքերի մեջ՝ հավատն առկայծում:

Այս սահմանավոր և պատրողական
Կյանքի ավարտին մահն է տիրական,
Աստուծո վկա ընտրյալն է միայն
Հաղթում մութ մահվան՝ լույսով հարության:

Տարան լողացրին և ընտրելագույն
Պատմուճան հագցրին՝ բեհեզ, ծիրանի,
Ոտներին գուլպա և մուճակ դրին,
Արտախուրակ ու գոտի կապեցին:

Նորոգ հարուցյալ սուրբ նահապետին
Փառքով ու պատվով պալատ բերեցին:
Հանդերից բերին ցնորված արքային
Որպեսզի բուժվեր ձեռքով մեծ Սրբի:

Գրիգորն հպավ ճակտին հիվանդի
Խորհրդանիշով փրկչական խաչի.
Բացվեցին աչքերն հեք մոլորյալի,
Մեղքերն իր տեսավ ծանր ու ողբալի:

Թողություն խնդրեց վասն իր մեղքերի,
Ապաշխարության և անդրադարձի
Հորդ արցունք թափեց աղբյուրի նման,
Որոնք մեղքերն իր սրբեցին տարան:

Եվ իբրև նշան ինքնաձաղկումի,
Մասիս բարձրացավ, որ ժայռեր բերի՝
Կերտելու համար նոր վկայարան,
Սրբոց բնակարան վասն իր քավության:

Թափված հորդ արյունն առաքյալների,
Ստեփանոսյանց, Ոսկյանց, սուրբ Սանդուխտ կույսի
Եվ ողջ քրիստոնյա նահատակների
Աշխարհն էր լցնում զերթ բույր կնդրուկի:

Հայ Եկեղեցու բյուր նահատակաց
Երկար տարիներ ձայնն ըմբերանված
Հնչում էր նորից, հրաշքներ գործում,
Հավատի սերմն էր սրտերում աճում:

Սուրբ Թադևոսի, Բարթողիմեի
Եվ նրանց հաջորդ եպիսկոպոսաց
Որպես արժանի հաջորդ ժառանգորդ,
Հովվապետ օծվեց սուրբն Գրիգոր:

Նոր Հայրապետն էր գալիս Հայաստան՝
Փառքով նստելու գահին հայկազյան.
Արքան էր ելել նրան հանդիման,
Երկինք և երկիր կապել են սերտ դաշն:

Քահանապետն իր ճանապարհին
Դեպ Վաղարշապատ, գետերի ափին
Կամ Արածանու զով հովիտներում
Զարմերն հայկազյան Հոգով էր կնքում:

Տալիս էր նրանց շնորհ երկնային՝
Արժանացնելով Հոր որդեգրության,
Գունդ-գունդ հայերի վրա էր իջնում
Սուրբ Հոգին որպես լուսե կերպարան:

Աղոթատներ, բազում դպրոցներ
Երկրում բացվեցին բոլորի համար.
Գիտության լույսով և ճշմարտության
Սրտեր ու մտքեր սիրով հերկվեցին:

Ատրուշանները վիմով ծածկեցին,
Մոխիր ու կրակ հողմին հանձնեցին,
Փոխան վառեցին սերն հավերժական՝
Աստուծո սերը հավիտենական:

Տաճարներն ամեն հին աստվածների
Վերակերտվեցին խաչով Քրիստոսի.
Քրմեր ու մոգեր վերակրթվեցին,
Դարձան մատովակ կենարար Բանին:

Ընկան Բելիարն ու սին աստվածներ,
Նրանց անկումից ծնվեց երկնավորն,
Աստված էր իջել իբրև հայտնություն՝
Ցույց տալով սերն իր մարդկանց մոլորուն:

Աստված բարեգութ տվել էր Որդին
Մարդկությանն իբրև Իր սիրո նշան,
Որ զոհողությամբ և խաչելությամբ
Մահվան էր հաղթել հզոր հարությամբ:

Գրիգոր հայրապետ Վաղարշապատում
Իր ծրագրերն էր ի կատար ածում.
Ջերթ արթուն պահակ աղոթում էր հար,
Փորձում էր հասնել Տեսիլքին անճառ:

Իր թախանձանաց որպես պատասխան,
Մի գիշեր երկնից իջավ նոր Արքան,
Բախեց իր մուրճով, դժոխքը սարսեց,
Լուսեղեն շողով մեր Տունը կերտեց:

Ո՞վ հրաշք անճառ, տեսի՛լ դու լուսե,
Օրհնյալ Միամոր Որդի դու, լսե՛
Մեր Լուսավորչի աղերսն անդադար.
«Լե՛ր հայր ու պաշտպան ազգիս դարե-դար»:

Հունիս 1988

Զատիկ

Ծաղիկ բուրյան դու բացյալ
Քառաթև խաչ զարդարյալ,
Զդոունս դժոխոց խորտակյալ,
Կյանք ի մահվանե բուսյալ:

Ծաղիկ կենաց դու գարնան
Եվ դատակնիք հաղթության,
Զխավարն լուսով ես պճնյալ,
Իսպառ զմահն զգետնյալ:

Ծաղիկ-ծաղիկ դու բուրյան,
Կամուրջ հուսո փրկության,
Հանիծից զմեզ դու բարձյալ,
Հոտ անուշից ես բուրյալ:

1987

Հող հայրենի

ՀԵՐՈՍԱԿԱՆ

Հանգի՜ստ նրանց, որոնք ընկան
Անապատի ավազներում,
Մեծ աքսորի ճամփաներում:
Հանգի՜ստ նրանց, որոնք ընկան
Կյանքի մարտում, դեռ ընկնում են
Իբրև վկա արդարության,
Վասն հայրենյաց ազատության:
Օ՜, ձեզ համար ես ի՞նչ խնդրեմ,
Ինչպե՞ս պատմեմ, նկարագրեմ
Ձեր տառապանքն ու զրկանքը
Եվ անողոք ձեր վախճանը,
Արյունը ձեր, արցունքը ձեր՝
Պատմության դեմ քսված ստվեր:
Նահատակնե՜ր, մարտիրոսնե՜ր,
Ի՞նչ անունով որակեմ ձեզ,
Արյունաքամ ու բզկտված
Եվ անարցունք գերեզմանված:
Մութ գետերում խեղդված կույսեր,
Դո՜ւք՝ գահավեժ պատվի բերդեր,
Բյուր դիակներ ընկած անտեր...

***

Արյուն թափվեց անմեղ մարդկանց,
Գետերի պես ծովեր լցնող,
Ու խողխողվեց մի ժողովուրդ,
Մի հինավուրց լույսի սերունդ:
Հազար ու հինգ հարյուր տարի
Եկան անցան՝ Վարդան կապրի,
Հոգին հայի, սեգ ու արի,
Չի մահանա, նա մահ չունի:
Բյուր-բյուրավոր զորքեր անցան,
Խավարն անցավ իր դավերով,

Մեր պատմության ճանապարհով,
Խոցոտեցին, թալանեցին,
Աստղերի պես մեզ ցրեցին:
Պարսիկն եկավ իր փղերով,
Իր հավատի թեժ կրակով,
Արաբն իր նոր մարգարեով,
Իր սրերով ու Ղուրանով:
Թաթար, մոնղոլ, մամլուք, սելջուկ,
Դեմ մեր կամքի եղան խոնարհ:
Ստրկության դարեր երկար,
Տառապանքի ձիգ տարիներ,
Բազում էջեր հայ պատմության
Հայ արյունով կնքվեցին:
Ո՜հ, հայի՛ գիր, ճակատագի՛ր,
Փառքի կողքին՝ դրված մոխիր,
Սիրո կողքին՝ դրված անեծք,
Խավարի դեմ՝ միշտ լույս անծիր:

***

Մեր պատմության սրտի վրա,
Ուրախության ու ծաղկունքի
Գարնան մի օր, պայծառ մի օր
Բացեց թուրքը մի խորունկ վերք
Իր մահասփյուռ յաթաղանով:
Մեր ազգն անհոգ, մեր ազգն անմեղ,
Դավադրությանն այս անտեղյակ,
Իր պատմական ոստաններում,
Գավառներում ու գյուղերում
Կլանված էր աշխատանքով,
Իր առօրյա վար ու ցանքով:
Ապրում էր նա խղճով արդար,
Ապրում էր նա եղբայրաբար
Բոլորի հետ. ու բոլորին՝
Թուրքին, քուրդին ու լազերին
Իր սեղանից էր կերակրում:

Թոնրի ծուխը ամառ-ձմեռ
Քամուն տրված խնկի նման
Բարձրանում էր երկինքն ի վեր:
Ցեղի հոգում կար թաքուն սեր
Մարդու հանդեպ առանց խտիր:
Դարեր առաջ թուրքը եկավ,
Բիրտ իր ուժով նա տեր դարձավ
Հայոց հողին, ծաղկուն դաշտին,
Իրավունքին, ամեն ինչին:
Աշխատասեր հայը, սակայն,
Քրտինք թափեց՝ փարված հողին,
Ու կերակրեց իրեն, նրան
Ի սեր բարի դրացնության:
Ու փայփայեց մի հին երազ,
Հազար տարվա մի վսեմ իղձ.
Ազատագրել հողը կորած
Տիրողներից հայահալած՝
Ցանկանալով տերը դառնալ
Իր մայր հողին, անդաստանին,
Իր վանքերին, մշակույթին,
Ու կերտել իր ճակատագիրն
Իր իսկ ձեռքով ու հանճարով:

***

Մեր վաղեմի ու հարազատ
Մեր հայկական հին ոստաններ.
Արքայանիստ Վաղարշապատ,
Վայելչագեղ դու Արտաշատ,
Այգիներով շրջապատված
Առատության Դվին քաղաք:
Աստվածպարգև չքնաղ Անի,
Հազար գմբեթ, եկեղեցի
Երկինք ձգված, դու գեղանի
Շքեղ քաղաք Բագրատունի:
Դուք բոլորդ անմահանում՝

Մեր անցյալի փառքի վկա,
Մեր վարդագույն ապագայի
Դուք անկորուստ գրավական:
Անմեռ հոգին, հայի հոգին,
Հախուռն ոգին արի ու սեգ,
Մոխիրներից, ավերներից
Կրկին ելավ, ոտքի կանգնեց...
Գողգոթայի արյան լճից
Բողբոջեցին կարմիր վարդեր,
Ըմբոստացավ հայը կրկին
Ու մաքառեց ու ծառացավ
Դահիճների ու մահի դեմ:
Փառքի պսա՜կ, դափնեպսա՜կ
Ձեր ճակատին, մեր հերոսնե՛ր,
Լեռնականնե՛ր, ֆիդայինե՛ր,
Ռանչպար, մշակ հայրդիներ:
Հազա՜ր պսակ հերոս Վանին,
Մուսա լեռան մեր քաջերին,
Թուրքի սարսափ մեր Զեյթունին,
Տարոն խիզախ հերոսներին,
Սասնա խրոխտ ոգիներին,
Հայ ռազմիկին, կամավորին,
Վասն հայրենյաց պատվի դաշտում
Ամենուրեք կռվողներին,
Փառքով ընկած հերոսներին,
Հազարներին դափնեպսա՜կ...
Իսկ քե՛զ, հերո՛ս մեր Անդրանիկ,
Սասնա սարի սեգ լանջերից
Ծնված քաջիդ, մեր բռնության
Շղթաները կոտրատողիդ,
Քեզ՝ հերոսիդ դավթանման,
Նոր օրերի Արտավազդիդ
Հազա՜ր պսակ, լուսապսա՜կ...

***

Միլիոն ու կես. գարնան մի օր
Մեր եղբայրներն բարձրացվեցին
Դարձյալ ի խաչ ու նախատինք:
Մտքի, գրչի ու մեր հոգու
Մշակները աքսորվեցին.
Մնաց մենակ հոտն հայրենի
Անտիրական դեմ փոթորկի:
Խելագարվեց երգի տիտան
Մեր Կոմիտասն անզուգական,
Լռեց երգել քնարն հայի:
Ամբողջ ազգով, թուրք ծրագրով
Կառափնարան մեզ քշեցին՝
Սպանելու թե՛ մեզ մարմնով,
Թե՛ մեր պաշտան մշակույթով:
Դաժա՛ն ճամփա, հայի՛ ճամփա,
Գաղթի՛ ճամփա, մահվա՛ն ճամփա...
Արևակեզ անապատներ...
Դեպի Դեր-Զոր քանի՜ տարի
Հայը քայլեց խաչն իր ուսին.
Ճամփաներում մեկիկ-մեկիկ
Կամ խումբ առ խումբ նրանք ընկան
Հյուծված, ծարավ ու անսվաղ,
Գաղթի ճամփին, մահվան ճամփին:
«Գթա՛, Տէ՛ր, մեր ննջեցելոց».
Գթա՛ նրանց հոգիներին,
Հա՛յր բարեգութ, ափոփարար,
Դու արարիչ ողջ մարդկության,
Արդարության, խաղաղության:

***

Մենք կերտում ենք մեր ապագան
Սերունդների համար գալիք,
Մեր անցյունից ենք նոր հառնել

Ու հավերժի գինով արբել:
Մեր սրտում եք, նահատակնե՛ր,
Ձեզնից ժառանգ երկիր ունենք՝
Գնված արյամբ անմեղ ու թանկ,
Մեր տեղչանքի իբրև պսակ:
Քե՛զ համար լոկ ընկան նրանք,
Որպեսզի դու, սո՛ւրբ հայրենիք,
Մնաս մեզ հետ, դարերի՛ հետ:
Դաշտերիդ մեջ քարերն անգամ
Ծիլ են տալիս հայ քրտինքով:
Ո՞վ կարող է կտրել ձեռքը,
Աշխատասեր մարդու ձեռքը.
Ո՞վ կարող է խեղդել երգը,
Անտունին ու գութաներգը.
Ո՞վ կարող է սանձել հոգին,
Նարեկացու ճախրող հոգին:
Ո՞չ, չեն կարող քանդել տունը՝
Մշտակառույց հայի բույնը:
Հազար բողբոջ, հազար ծաղիկ
Բացվել են վառ արևի տակ,
Լուսաճաճանչ տեսիլներով
Արարատի հայացքի տակ:

Ապրիլ 1965

ԲԱՐԲԱՌ ՀԱՅՐԵՆԻ

Ինձ իմ երկրից արմատախիլ հեռացրել են,
Ողջ աշխարհով մաս եմ եկել՝ քեզ իմ շուրթին,
Դու իմ միակ վառ հիշատակ նվիրական,
Իմ հայ բարբառ, բարբառ քաղցր իմ մանկության:

Մոր կաթի հետ քեզնով սնվել, մեծացել եմ,
Ճակատագրով երկվորյակ ենք, քեզ մոռանա՞լ.
Նվազում ես օրըստօրե, հուշիկ մեռնում,
Երբ հանգում են ճրագները մեր օջախում:

Խլեց ոսոխն ու ավերեց մեր տունը շեն,
Ողջ աշխարհում եղանք անտուն, թափառական,
Դու մնացիր մեր շուրթերին՝ վերջին նշխար,
Հին օրերի փառքի վկան, ո՛վ սուրբ բարբառ:

Դու մեռնում ես, ո՞ւմ աղերսեմ, գտնեմ դարման,
Իմ գավառի դու վերջին կանչ, բարբա՛ռ անգին,
Վախենում եմ «հուսկ բանք»-դ ասող գուցե լինեմ,
Եվ հայրենի իմ բարբառով աչքս փակեմ:

Հուլիս 1986

ԶՄՌԱՆ ԵՐԳ

Զյուն է գալիս հանդարտորեն Էջմիածնում,
Սուրբ Հակոբն է ճերմակ մորուքն հանդարտ սանրում,
Բամբակ-բամբակ առատ, քնքուշ փաթիլներով
Զյուն է իջնում՝ երկնի օրհնանք, նազ ու պարով:

Ծածկել է նա երդիկ ու բակ, փողոց ու տուն,
Պարզել դրոշ խաղաղության և հաշտության,
Միայն թոնրի ծուխն է ուղիղ երկինք ելնում,
Բուրմունքն հացի մարդկանց հասնում, տուն է կանչում:

Զյան միջից երևում են խոյակ-խոյակ
Գմբեթները Մայր տաճարի՝ զարդ ու քանդակ,
Զերթ սպիտակ տաղավարներ իրար կողքի,
Ուր պահվում է լույսը անշեջ Լուսավորչի:

Աշխարհն հայոց քնել է խոր ձյունով ծածկած,
Խստաշունչ այս ձմռան ցրտին հողին փարված,
Հիմա գարնան ծաղկուն օրվա երգն է թրթռում
Աշնան ցանված ոսկի հունդի սրտի խորքում:

Իջի՛ր առատ, ձյո՛ւն հայրենի, ինձ էլ ծածկի՛ր
Փափուկ ճերմակ սավանի տակ քո կենսաձիր,
Երբ ճռվողեն հավք ու առվակ գարնան շնչով,
Ծիլ ու ծաղկով դու ժպտա՛ ինձ պայծառ տեսքով:

Նոյեմբեր 1986

ԳԱՐՈՒՆ

Գարուն է ահա, սիրտս է վկայում,
Երկինքն է անամպ վառ գույնով շիկնում,
Արևն է շռայլ շող դեմքը պարզում,
Եվ թռչնոց երգով ծիլն հողում թրթռում:

Գարուն է ահա պայծառ գույներով,
Ծառերն են շիկնել ծաղկունքի տենչով,
Պտուղներն իրենց արևի շողով,
Ջերմով հագցած՝ պայթում են կյանքով:

Հողն երկրի փափկել, ծիլեր են ծլել
Ու սպասում են անհամբերությամբ
Տաքուկ քնքշանքին, արևի շողին,
Մինչ սարսռում են ցրտից վաղորդյան:

Երգը հավքերի եթերն է լցրել
Ցնծության շնչով և զգլխանքով,
Ձմռան ցուրտ քնից կորդ հողն է զարթնում,
Նոր կյանքի հույսով սրտերն օրորում:

Թող գարնան, կյանքի այս առավոտյան,
Բարկ ու կենսատու արևն չխամրի,
Սև ամպը չգա, չսքողի նրան,
Թող ապրենք հույզով, հույսով գալիքի:

Մարտ, 1987

ՄՈՐ ԱՐՑՈՒՆՔԸ

Մի մայր լալիս է անհա՝ փլված պատին կոթընած,
Նա ավերակ է դարձել, որդու կարոտը գրկած՝
Աղերսում է, պաղատում, որ փակ դռները բացվեն,
Երջանկությունը ժպտա անուշ ժպտով մանկական:

Մի մայր լալիս է անհա, ծեծում կուրծքը չորացած,
Մի օր այդ կուրծքն էր սնել որդուն կորած, մոլորված,
Չոր կրծքի տակ մի տաք սիրտ այնպես կոտտում է անձայն,
Որ քարն անգամ կճաքեր այդ կոտտանքից շանթահար:

Կորած որդու կարոտով մոր արցունքն է տաք թափվում,
Մինչ դռները օգնության պինդ փակվել են, չեն բացվում:
Հազար աղերս ու արցունք անօգուտ են և իզուր,
Մի մայր լալիս է կքած՝ սիրտը բռնած ափի մեջ:

Մի մայր լալիս է անձայն, կորած հույսն է որոնում...
Վիշտն անամոք իր սրտի դաշտերին է նա պատմում...

Ապրիլ 1987

ՍԵՎԱՆ

Երկնակապույտ լիճ հայրենի,
Լազուր կամար, երկինք լուսե,
Երկնի ճամփին իրար գրկել,
Գույն ու տեսքով են շփոթվել:

Գեղամ սարի լանջին ննջող
Ջյունն է հալվում, դանդաղ հոսում,
Հազար հանգով, երգ ու տաղով
Միանում է լճին բարով:

Կապույտ-լազուր լճի խորքից
— Ծիծաղ-ծիծաղ ճերմակ փրփուր—
Ալիքներն են ափին գալիս,
Ջերմ կարոտով համբույր տալիս:

Միջօրեին արևն եկել,
Լճի վրա է խոնարհվել,
Ջուլալ ջրից խմել, հարբել,
Ջինջ հայելուց այրվել, շիկնել:

Լազուր-կապույտ լի՛ճ իմ լուսե,
Կյանք ու ծիծաղ ազգիս, հոսե՛,
Կյանքովը քո կյանք ես տալիս
Նոր կյանք ապրող ժողովրդիս:

Սեպտեմբեր 1986

ՄԱՍԻՍ

Կանգնել ես հպարտ, փառահեղ, խոհուն,
Ժամանակների հավերժակա՛ն այուն,
Կանգնել ես դաշտում, լուռ խորհրդածում,
Մերթ պայծառ ժպտում, մերթ մռայլ թախծում։

Դիտում եմ հեռվից, քեզնով հմայվում,
Փորձում եմ կարդալ խորհուրդդ թաքուն
Եվ պատմությունը հազար դարերի,
Նոյից սուրբ Հակոբ, մինչև Աբովյան։

Հավերժական ես, սա՛ր իմ սրբազան,
Քանդակ կատարյալ՝ տեսքով բազմազան,
Արշալույսների համբույրով ցողուն,
Վերջալույսների թախիծով օծուն։

Ինձ նման խելառ ամպեր մոլորուն
Սիրահարվել են քո տեսքին շքեղ,
Խոովք է ապրում սիրտս սիրակեզ,
Երբ օտար ամպեր փաթաթվում են քեզ։

Հունիս 1986

ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

Բարի լույս քեզ աշխարհ՛ի սիրուն,
Բարի լույս քեզ, ողջ մարդկություն։
Զարթնել եմ ես իմ խոր քնից,
Շառագույնը հորիզոնի
Աչքս բացել, ողջունել եմ։
Արշալույսի կարմիր շողերն
Աշխարհ լցնող՝ ըմբոշխնել եմ,
Արեգակի վեհ հայելուն՝
Արարատի սեգ գագաթին,
Առավոտյան թարմ աչքերով
Ես նայել եմ հին կարոտով։

Խաղաղ, պայծառ և բազմերանգ
Առավոտ է Հայաստանում։
Խոտի վրա շաղն է նստել
Ադամանդե աչիկներով,
Լայնատարած Արարատյան
Դաշտն է հագել առավոտյան
Շամանդաղը՝ զերթ պարեգոտ
Իր թափանցիկ նուրբ շղարշով։
Կյանքն է հառնում զվարթ, ծաղկուն՝
Փողոցներում ու շեներում։

Համատարած խաղաղություն,
Դաշտ ու հանդում հանդարտություն։
Շուտով կյանքը պիտի եռա,
Նոր ավյունով պիտի խայտա՝
Մոռացած հոգսը երեկվա,
Պայծառ հույսով մեր ապագա...
Քեզ բյո՛ւր ողջույն, ոսկի արև,
Ամենօրյա մեր կենսատու։

Ողջույն և քեզ, որդի՛ մարդո,
Եղբա՛յր ծանոթ ու անծանոթ,
Եղբա՛յր հեռու և մերձավոր:
Ժամանակն է հասել, զարթի՛ր
Քո խոր քնից, վե՛ր կաց, կանգնի՛ր,
Երեկվա հոգսը թոթափի՛ր,
Նոր հավատով ողջագուրի՛ր
Մարդկությունն ողջ մոլորակի
Եվ քո ձայնով ուժգին կանչի՛ր,
Ծագող լույսը դու ավետի՛ր:

Այս աշխարհի բնակիչներն
Երկրի վրա ուր էլ լինեն,
Աչք բացելիս առավոտյան
Խինդով մարդկանց թող ողջունեն:
Ողջունեն թող ծանոթներին,
Բարին մաղթեն անծանոթին
Անկեղծ սրտով՝ սիրով ցողուն,
Ապագայի հույսով լեցուն,
Որ լինի օրն արդար, բարի,
Եվ լինի կյանքն արդյունալի:
Մարդկությունը այս աշխարհի
Թեև մաղթանքն ունի բարի՝
Հին դարերից ժառանգված,
Իր շրթներին դրոշմված,
Բայց տառապում է դեռ անհույս
Նախանձի ու ատելության,
Կեղեքումի, տիրակալման
Իր ժառանգած հին մեղքերով:
Շուրջդ դիտի՛ր դու ուշադիր,
Այս աշխարհում որքա՜ն մարդիկ
Անտուն քնում են փողոցում,
Անգործ հաճախ մահն են տենչում:
Արդարության, սիրո ծարավն
Անհուսության գիրկն է նետում

Եվ կորստյան մատնում նրանց:
Եվ աշխարհում քանի՜ ցեղեր
Իրենց մաշկի գույնի համար,
Հավատամքի ու ցեղային
Խտրի համար են հալածվում,
Անարգանքի սյունին գամվում:

Իսկ այլ մասում մոլորակի
Հղփացել են ինչքից մարդիկ,
Կեղեքում են նմաններին,
Ստրկացնում և սպանում,
Մամոնային երկրպագում,
Իրենց համար ինչք են դիզում
Առանց երբեք խղճի խայթի
Եվ կամ դույզն անդրադարձի:
Ահա, խնդրեմ, իմ բարեկամ,
Ա՛յս է աշխարհն մեր այսօրվա:
Ինչպես երեկ, այսօր կրկին
Ամբողջ սրտով պիտի գոչեմ
Ողջ աշխարհի խեղճ մարդկության,
Ես բարի լույսը ավետեմ
Վաղվա արդար հույսով լեցուն:

Վե՛ր կաց, եղբա՛յր իմ տառապած,
Զարթի՛ր, ելի՛ր քո խոր քնից.
Գիշերն անցավ, լույսն է բացվել,
Դարն է հասել վերածնման,
Ժամն է հնչել արդարության,
Բարձրաղաղակ և համարձակ
Գոչի՛ր ուժգին և ողջունի՛ր
Բոլոր մարդկանց՝ վառ հույսով լի,
Զարթնող բոլոր երկրների:

Տե՛ս, արևը առանց խտիր
Լույսն իր բաշխում է բոլորին:
Կյանքը պարգև է մեզ տրված,
Մեր Արարչից մեզ շնորհված:
Հավատա՛ դու արդարության,
Նրա պտղին՝ խաղաղության,
Որ պիտի գա, մի օր բազմի
Սրտի վրա ողջ մարդկության:

Մինչ այդ, եղբա՛յր, լի հավատով՝
Արև՛ եղիր, դու օ՛դ դարձիր,
Կյա՛նք տուր նորին մեր գալիքի,
Լույսդ ափի՛ր, ձեռքդ երկարի՛ր,
Հասի՛ր թույլին, իսպա՛ռ օգնիր:
Եվ անխտիր քո շնորհից
Քո սեղանի բարիքներից
Բաշխի՛ր բոլոր աղքատներին,
Առատ, անծիր բաշխի՛ր խեղճին,
Իդեալի՛ն սպասարկիր,
Որ ծագի լույսն արդարության
Եվ բնակվի մեջ մարդկության:

Քեզ բյո՞ւր ողջույն Հայաստանից,
Մեր տառապած, նահատակված,
Արդարության այնքա՞ն կարոտ
Արդարամիտ ժողովրդից:
Մեր ծով արյամբ սրբագործված
Բիբլիական այս սուրբ հողից,
Արևավառ մեր օջախից
Բարի լո՛ւյս քեզ, եղբա՛յր անգին,
Մենք՝ լծակից վեհ երազին՝
Մոլորակի և մարդկության
Հավերժ խաղաղ ապագային:

Տո՛ւր ողջույնդ առավոտյան
Մարդկանց բոլոր՝ հույսով անմար,
Որ բարի լույսն խաղաղության
Ընդմիշտ հաղթի չարին դաժան:

Սեպտեմբեր 1986

ՍԵՐ

Սեգ սարերի լանջից բխող զուլալ ջուր,
Ծիրակի դաշտից քաղված հաց մաքուր,
Նարեկի շրթից՝ աղոթք թրթռուն
Եվ շինականի քրտինք պսպղուն ...

Սերն արևն է ջինջ, կապույտ երկնքի
Եվ հողը արդար բերրի իմ երկրի.
Անձրևն է պապակ ցորենի արտի
Եվ արարիչը մեր տիեզերքի...

Սիրո մեջ չկա անձնասիրություն,
Նվիրում է նա, անձնազոհություն:
Սիրո տաճարի մաքուր խորանում
Սրտերն հավասար են զոհաբերվում:

Սիրո մեջ բնավ չկա խտրություն,
Արդար է սերը սիրող մոր նման,
Սերն, հավետ ներկա, նոխազ է խոնարհ՝
Պատրաստ զոհվելու սիրելվույն համար...

Սեպտեմբեր 1987

ԵՐԵՎԱՆԻՆ

Արարատյան դաշտի եզրին
Կա մի քաղաք հին ու անգին,
Խոր դարերի փոշին թոթված,
Նոր օրերի փառքով զուգված:

Դա իմ քաղաքն է՝ Երևան,
Իմ հույզերի շտեմարան.
Էրեբունի, իմ Երևան,
Մեր նոր կյանքի դու ձուլարան:

Կյանքիդ ճամփով դարեր անցան,
Սփովեցինք աստղերի պես,
Դու մնացիր անմար փարոս,
Մեզ տուն կանչող ձայն մայրական:

Վաղարշապատ, Անի, Դվին,
Արտաշատ ու Վան՝ գնացին...
Մեր տեսիլքի ամուր կուվան,
Դու նոր կյանքի հզոր կայան:

Քեզ սիրում եմ, իմ Երևան,
Դու խտացած ողջ Հայաստան,
Լուսե շողուն ճամփաներով
Տանում ես մեզ նոր տեսիլքով:

Սեպտեմբեր 1986

ԳՈՎԵՐԳ

Նորածին մանկան
Կանչի պես թարմ ես,
Եվ սարի լանջին
Նիրհող ձյունի պես՝
Մաքուր ու անբիծ։

Քեզ ո՞վ է ծնել,
Աշխարհ զարդարել
Մի անգին գանձով,
Գոհար մարգարտով,
Խինդ ու ծիծաղով։

Դու՝ ծաղիկ գարնան,
Դու՝ գարուն վառման,
Բուրմունքդ է առել
Սարեր ու ձորեր,
Նոր կյանքով լցրել։

Իմ հայրենիքի,
Մեր օրհնյալ հողի
Պտուղ քաղցրահամ,
Ծնունդ գերազանց,
Խնդությունն անանց։

Դեկտեմբեր 1986

ԱՐԱՐԱՏ

Դու մերն ես, լե՛ռ իմ, մերն ես հավիտյան,
Դասնգնել ես հեռվում կապտտով անհուն,
Նայում ես, ժպտում, մեզնով լիանում,
Քո տեսքից գերված՝ հասակ ենք առնում։

Պարզապես քեզ, լե՛ռ, մեզնից խլել են
Մեր գողգոթայի դաժան օրերին.
Թեև թշնամու սրով խողխողվել՝
Իսպառ չենք կորչել, քո տեսքից զրկվել։

Դու մերն ես, լե՛ռ իմ, անունդ վկա,
Տե՛ս, օրըստօրե աճում ենք անա.
Մի օր, հավատա՛, սպառ ու նվագով
Քեզ պիտի գրկենք անմար կարոտով։

Չէ՞ որ դու մայր ես՝ տուն կանչող, բարի,
Եվ խորհրդանիշն իմ ժողովրդի,
Չէ՞ որ դու հարսն ես մեր երազների,
Դու, լե՛ռ սրբազան, խորհո՛ւրդ հայ կյանքի։

Մենք բիբլիական շատ վաղ օրերից
Ապրել ենք ու կանք՝ նույն հողին փարված,
Կյանքի նույն հունով քայլել դարերով
Եվ ձուլվել միմյանց՝ մի անձ դառնալով։

Սի՛րտ իմ, դու երկնի՛ր, մարգարեացի՛ր,
Քո ձայնով հուժկու աշխարհին հայտնի՛ր՝
Թող չարը սարսռա, լավն էլ իմանա,
Որ մերն ես եղել, մերն էլ կմնաս։

Նոյեմբեր 1986

ՀՈՂ ՀԱՅՐԵՆԻ

Ես հողն եմ, հողն եմ հայրենի, որ կա,
Ծնվել եմ հողից, հող էլ կդառնամ,
Հայրենիքս ու ես հենց դրա համար
Չենք կարող լինել էությամբ տարբեր:

Իմ նախնիները ապրել են այստեղ,
Հողի ընդերքից նոր կյանք ստեղծել,
Իմ հերոսները կռվել են այստեղ,
Իրենց արյունով հողը ոռոգել:

Երակներիս մեջ իմ հողի ուժը
Ավյուն է դարձել, ու նրա կանչը
Սրտումս անթեղված արձագանքում է
Դարերի խորքից, սիրո երգ դառնում:

Սերը իմ հողի հավատ է դարձել,
Արարիչ դարձրել, պայքարի մղել,
Թշնամու դիմաց մահվան է հաղթել,
Իսկ կյանքում խաղաղ՝ անվերջ արարել:

Ես երջանիկ եմ, որ գտա նրան,
Հայրենիքս ու ես նույնն ենք հավիտյան,
Սիրել ենք իրար բազում դարերով,
Եվ սիրելու ենք թաքուն կապերով:

Հունիս 1986

ՄԱՆԹԱՇԻ ՀՈՎՏՈՒՄ

Մանթաշի հովիտ՝ ծաղկուն դաշտերով,
Լեռների լանջից կախված ամպերով,
Սարից սար գցված խոր-խոր ձորերով,
Նախշուն հավքերի դյութիչ երգերով:

Դաշտեր ու լանջեր կանաչ ու թավշյա,
Ծովեր անսահման, ծփուն, զմրուխտյա,
Սարերի կողին թառած անտառներ,
Մարգերի ծոցում այծեր ու գառներ:

Խոխոջն առվակի հավքերի երգին
Ընկերակցում է ռիթմով ցնծագին.
Զեփյուռն է շոյում իր նուրբ մատներով
Գույն-գույն ծաղիկներն ու դառնում գինով:

Հեռվում, Արագած սարի կատարին
Արծաթ գմբեթներ երկինք են ձգտում,
Հեռվից թվում է, որ քառագագաթ
Սարի կատարին ապրում է Աստված:

Երկի՛ր հայրենի, չքնաղ, մոգական,
Իմ ապրումների դու շտեմարան,
Մի օր երբ ննջեմ, թաղվեմ քո հողում,
Երգ պիտի դառնամ, հնչեմ քո ծոցում:

Օգոստոս 1988

ՊԱՆԴՈՒԽՏ ՔԱՋԻՆ

Զորավար Անդրանիկի հիշատակին

Հերո՛ս, ելի՛ր, դու մի՛ ննջիր,
Թոթափի՛ր մահն, ոտքի՛ կանգնիր,
Թանձրի՛ր նժույգդ ու պայծի՛ր
Դեպի Մասյաց հայոց երկիր:

Քե՛զ են կանչում արք հայկազունք
Որդիք արյաց հայկյան զարմի,
Քե՛զ են գովում հայոց կուսանք
Երգ ու պարով՝ կանչ հերոսի:

Ցոպ հողում վաթսուն տարի
Բավ է ննջես վտարանդի,
Ե՛կ, տո՛ւն դարձիր, հերո՛ս արի,
Վրեժդ արդար՝ հայոց ազգի:

Շիրմիդ վրա սպասումից
Քարացել է Ապանն անգամ՝
Հայացքն ուղղած Տարոն դաշտին,
Հազարաղբյուր մեր սարերին:

Հայկյան զարմի որդիք, զարթի՛ք,
Մի՛ նմանվեք կույսերին սին,
Բա՛վ է արծվին պատանդ պահեք,
Քաջի պատիվն ոտնակոխեք:

Թող Ալաշկերտ, Մուշ ու Սասուն
Լցվեն շնչով մեր հայկազուն.
Վանքերում սուրբ մատաղ գենեք,
Դարձն հերոսի տոնախմբեք:

Չկան քաջեր աննպատակ,
Հողն է քաջին փառքի պսակ,
Քաջն իր հողում է սերմանվում,
Հողն էլ՝ արյամբ սրբագործվում:

Երկի՛ր հայոց դու նախիրյան,
Ցնծա՛ հավետ, ա՛զգ իմ հայկյան,
Ուխտն հերոսի կատար ածող
Կամք հայության՝ հավերժ ապրող:

Մարտ 1988

Հովհաննես

ԳԵՂԱՐԴԻ ՃԱՄՓԻՆ

Սարերի վրա մի արծիվ խաղաղ
Ճախրում է հպարտ, շուրջպար է անում,
Թևերն երկնքի ամպին է քսում
Ու սուրում թափով, ձորերն է չափում:

Զմրուխտ սարերից զեփյուռն է բերում
Բյուր առվակների կարկաչն ըղձալի,
Հեռվում գառներն են մայում, թռչկոտում,
Բզեզ ու ճպուռ կյանքն են գովերգում:

Քիչ հետո հանդարտ սև ամպն է գալիս,
Որոտում, հորդում հեղեղի նման.
Սև ամպի տակից արևն է շողում,
Երկինքն իր ճակտին կապում ծիածան:

Մարտ 1986

ՀՈՎՎԱԿԱՆ

Երեկոյան հնչեց կոչնակը ժամատան,
Ու ժամկոչը հնչեղ ձայնով եղանակեց՝
Փողոցներում կանգ առնելով ու ձայնելով.
«Համեցե՛ք ժամ, ողորմի ձեր ծնողացն Աստված»:

Փողոցներում անցորդները երեսներին
Խաչ քաշեցին, ու բացվեցին ճոնչալով
Դուռ ու դարպաս գյուղի ճամփին, և շեներից
Ահել-ջահել երկու սեռից ժամ փութացին:

Հորիզոնին, մայրամուտից մի պահ առաջ,
Բլուրներին թիկնեց արևն, հրաժեշտ տվեց,
Զմրուխտ սարից բառաչներով նախիրն իջավ,
Ժամն ավարտվեց, ամեն հարկում վառվեց ճրագ:

Խավարն իջավ, հուշիկ ծածկեց գյուղը համայն,
Քամին ոռնաց շների հետ փողոցներում,
Ծիսաց երդիկն ամեն մեկ տան քաղցր բույրով,
Քնող մանուկն հեքիաթներից երազն հյուսեց:

Առավոտյան, աքաղաղի կանչից առաջ,
Քաղցրալուր երգը ժամկոչի գյուղը լցրեց.
«Լույսն է բացվել, ողորմության դուռն է բացվել»:
Արևն արդար բացեց դռներն աշխատանքի:

Մայիս 1985

ԻՄ ՆՇԵՆԻՆ

Ծաղկել է իմ նշենին գարնան շնչով ու բույրով,
Կանգնել է նա առանձին զմրուխտ դաշտի եզերքին,
Նորապսակ հարսի պես շիկնել, հագել սպիտակ,
Մարգարիտներ շաղ տալով, կանաչ մարգը նախշելով:

Եվ մի զեփյուռ մոլորում՝ ճյուղերի մեջ նշենու
Թափառում է ու հուզում ծաղկած ոստերն սպիտակ,
Փրփրում է նշենին, ալիք-ալիք պսպղում,
Ջրերն ինչպես Սևանի կապույտ, անամպ երկնի տակ:

Եվ մի խարտյաշ մեղրատու անհագ տենչով ծծում է
Նեկտարն ծաղկանց նշենու այնպես գաղտնի, գողունի,
Ոտիկներով, թևերով բեղմնավորում է նրան
Ու սրարբած՝ շշնջում քաղցր խոսքեր ականջին:

Ծաղկել է իմ նշենին գարնան շնչով ու բույրով,
Նորապսակ հարսի պես շիկնել գալիք բերքերով:

Ապրիլ 1986

ՏԱՐԵՐՔԻ ԵՐԳՈՎ

Ծառերն ծիրանի կքել են բերքով,
Տերևներն թիթեռ կանաչ են հագել,
Զեփյուռն է շոյում, նրանց հետ խաղում,
Քշոցի նման երգ են շշնջում:

Բերքի երգն հողի հնչում է օդում,
Մինչ շողն արևի ներկում է թաքուն
Ծիրանի հատերն, ոսկի դարձընում,
Համ ու հոտ տալիս ամեն մեկ պտղին:

Հասել է բերքը պայծառ երկնի տակ,
Ծառերի վրա շողքով արևի,
Աստղեր են ծնվել հյութեղ, գեղեցիկ,
Տե՛ս, կյանքն է եռում երգով տարերքի:

Հունիս 1986

ԱՐՓԱՅԻ ՀՈՎՏՈՒՄ

Արփան այստե՛ղ է երգն իր հորինում,
Հավերժության հետ նա քայլ է պահում,
Անեղ մոունչով ձորերն է լցնում,
Ծառ ու ծաղկունքին կյանք է պարգևում:

Իր ճանապարհը հենց ինքն է բացել,
Ժայռից խոյակներ, քանդակներ կերտել,
Ժեռ ափունքներից փրփրադեզ հոսել,
Իր ժողովրդին նոր երթ է տվել:

Սարերի վրա ձյունը սպիտակ
Բորբ արեգակին գերված նայելիս
Կկոցում աչքերն, արցունք է թափում,
Եվ ջինջ արցունքից Արփան է ծնվում:

Իմ սիրտը պապակ՝ կարոտով անհուն,
Դարավոր երգիդ թովչանքով զեղուն,
Եկել նստել է հովտում երկնային,
Իր հոտը գտած եղնիկի նման:

Հունիս 1986

ՄՈԼՈՐՎԱԾ ՄԵՂՈՒՆ

Մեղո՛ւ սիրուն, մեղրատու,
Ի՞նչ ես ուզում ինձանից,
Թողած ծաղկունք ալ ալվան՝
Պտտվում ես իմ չորս դին:

Մեր լեռներն ու հովիտներն
Եվ անտառներն երփնագեղ
Վարդ ու ծաղկով գույնզգույն
Քեզ են կանչում, սպասում:

Կորնկանի դաշտերում
Զվարճասեր ընկերներդ
Մեղմիկ շնչով զեփյուռի
Ճոճք են խաղում ու բզզում:

Մինչ եղբայրներդ են վազում
Ծաղկե-ծաղիկ, դաշտից-դաշտ,
Հավաքում են, կուտակում
Նեկտարն հյութեղ ծաղկունքի:

Օգոստոս 1986

ԼԵՄԱՆԻ ԱՓԻՆ

«Խոսե՜, Լեմա՜ն, ձա՛յն տուր ջուրիդ ալքերեն,
Լեմա՜ն, Լեմա՜ն, պատմե՛ սերըդ լոիկ»:

Ռ. ՍԵՎԱԿ

Գիշերն ամբողջ լալիս էին
Մարգերն անհույս ու մենավոր,
Երկնքի ցողն իբր սփոփանք
Իջավ նրանց նուրբ երեսին:

Խոտ ու ծաղիկ, թփերն ամեն
Ցող ու շաղով էին զուգվել,
Արևի տակ, գերթ ադամանդ,
Փայլում էին նրանք անթարթ:

Առավոտյան արևն ելավ
Սեգ սարերի մութ կատարից,
Շաղն ու ցողը նա համբուրեց,
Տխրության տեղ՝ կյանք պարգևեց:

Լիճն էր հանդարտ առավոտյան,
Գերթ հարս ննջող առագաստում,
Արևն իջավ սարի լանջից,
Կռանալով խմեց լճից:

Ջուր խմելով նա համբուրեց
Իր իսկ շրթներն ջրի խորքում,
Լճին կարծես սեր բացատրեց
Ցողն արևի՝ տաք ու անկեղծ:

Եվ օրն ի բուն խաղաղ արևն
Լճի վրա, ջինջ երկնքում,
Ձերմ շողերով սեր բացատրեց
Ճղարշ հագած իր սիրունուն:

Սերն այդ հավերժ, դարե ի դար
Տևում է դեռ մինչև այսօր,
Ծողն արևի լիճն է հուզում,
Լիճը սիրուց ամպ է դառնում:

Ամպ ու արև երկնի մովում
Խաղ են անում, իրար գգվում.
Երբ հոգնում են, լույսն է մեկնում,
Ամպը տխրած՝ լիճ է դառնում:

Սերն, անավարտ մի մեղեդի,
Դեռ ամեն օր, ջինջ օրերին,
Նոր երանգով է կրկնվում
Գաղտագողի՝ այս պարտիզում:

Սեպտեմբեր 1988

Մտքի թևերով

ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆ

Ես ձեզ տեսած լինելու
Հրճվանքով եմ պարուրվել,
Բույրով խնկի, կնդրուկի
Հոգուս տաճարն է լցվել,
Այնպես քնքուշ, վարդագույն
Երանգ տվել իմ կյանքին,
Որ խնդությունն ինք կարծես
Իջել է ցած երկնքից:

Նայում եմ ես աշխարհին
Եվ չեմ ջոկում ոչ ոքի,
Չարն ու բարին միացել,
Քույր ու եղբայր են դարձել:
Ձեզ եմ միայն ես տեսնում
Բոլոր մարդկանց պատկերում
Ու ժպտում եմ բոլորին՝
Ձեր կերպարը իմ մտքում:

Տարօրինակ ես, աշխա՜րհ,
Մարդիկ նման են իրար.
Կյանքում երբ լավն ես տեսնում,
Էլ վատին չես նկատում,
Մինչև չարն քեզ չխոցի
Նրան դու չես նկատի:
Բարու հո՛ւնտը սերմանիր,
Ետ մի՛ նայիր դու, անցի՛ր....

Ես ձեզ տեսած լինելու
Հրճվանքով եմ պարուրվել,
Ծաղկանց բույրով լցվել ու
Դառն օրերն եմ մոռացել:

Բարի մարդկանց համար ես
Պատրաստ եմ տալ իմ հոգին.
Եղբայրության հիմքում էլ
Թող սեր լինի, որ ծաղկի:

Նոյեմբեր 1988

ՏԵՂԵՐԻ ՎԱՆՔՈՒՄ

Ուզում եմ երգով սիրտս ընծայել
Տեղերի վանքի սուրբ Աստվածամոր,
Մոմերի ճենճից սևցած պատերի
Ու երկինք ձգտող կամարների տակ:

Ծարաականների, տաղ ու գանձերի
Երգով եմ ուզում երկինք բարձրանալ
Եվ իմ երգի մեջ ուզում եմ դնել
Իմ ողջ էությունն ու անէանալ:

Ի՜նչ զգլխիչ է լինել հանդիման
Կյանքի Արարչին այս սուրբ տաճարում,
Թոթափել այստեղ փառքի ցնցոտին,
Մանկանալ, պարզվել ու պայծառանալ:

Հունիս 1986

ՍՓՈՓԱՆՔ

Հին երգերս երազ դարձան ու անցան,
Օրերն եկան ճամփորդի պես, գնացին,
Զյունասպիտակ ամպերն հեռու չվեցին
Ու հալվեցին առանց ցողի, անձրևի:

— Հին ու սիրած իմ երգերից դուք գիտե՞ք,-
Հարցրեցի ես անցորդներին փողոցի.
Դառն ժպտացին, անպատասխան գնացին,
Սիրտս մնաց ցուրտ գիշերվա ճամփեքին:

Իբր սփոփանք՝ հին օրերից անթեղված
Միայն մի կայծ ջերմացնում է իմ հոգին:
Իմ գա՛նձ անգին, իմ անցյալի հայելին,
Քեզ նայելով սփոփվում է իմ հոգին:

Դեկտեմբեր 1980

ԱՐԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Սերը շաղախն էր հողի,
Մի ձեռք հզոր, երկնային,
Ցողեց սերն իր ու շաղեց
Հողը անարգ ու անբեր:

Տվեց նա ձև, կերպարանք,
Տվեց թռիչքն իր շնչի,
Կավը թրթռաց, մարմնացավ,
Սերն՝ իբր հոգի զգեցավ:

Մարդն առաջին, իր հերթին,
Ոտների տակ տքնանքով
Տրորեց հողն ու վարեց,
Քրտինքով բերքն հավաքեց:

Հազար ու մի հնարքով
Ու դարավոր իր փորձով
Մարդն արարեց կյանքը նոր
Եվ պահանջներն իր բոլոր:

Երկար-երկար դարերով
Ապրեց մարդը մի իղձով.
Որ ինք դառնա արարիչ,
Անմահության իր կերտիչ:

Մարդու համար արարող
Կյանքն ավարտվեց իբրև հող.
Հոգին մնաց անմարմին
Ու միացավ անհունին...

Հունվար 1973

ՆՐԱՆ

Երբ սիրեցի,
Նրա համար
Ինքնամոռաց
Մեռնել անգամ
Հանձն առի։

Երբ վշտացրի,
Խոցված սրտին
Սպեղանի
Դառնալ հոգով
Ես տենչացի։

Երբ վշտացա,
Փոխարենը,
Որպես վրեժ,
Հաճույք, վայելք
Ես փնտրեցի։

Տարօրինա՜կ...
Այդ հաճույքից,
Այդ վայելքից,
Նշույլ անգամ
Չմնաց ինձ։

Մայիս 1977

ՆՈՐ ՏԱՐԻ

Եկար հանդարտ, նույն հանկերգով և կշռույթով,
Կարծես չէիր դու Նոր տարի, այնպես եկար.
Բարի՛ գալուստ, մեր շեմքից ներս ոտքդ բարի՛,
Նոր դուռ բացվող մեր անկատար երազների։

Աղերս ունեմ. թող մեր երկիրն խաղաղ լինի,
Կյանքը՝ պարգև աստվածային, շարունակվի.
Եթե հանկարծ երկրից չքվի ազնիվ հոգին,
Տե՛ր, վերստին մեզ պարգևի՛ր Հիսուս Որդին։

Կյանքն է երազ մի լուսավոր, բյուր էջերով,
Մարդիկ՝ ճրագ, մեկ-մեկ կանթեղ վառվող ներթով,
Շատերն են զուր վառվում ցերեկն, անհետ կորչում,
Իմաստունը մութ խավարն է լույսով պճնում։

Ե՛կ ներս շեմքից, հազա՛ր բարով, հույսի՛ տարի,
Ես չգիտեմ ի՞նչ ես բերում... գալըդ բարի՛։

Օգոստոս 1986

Ա Ծ Ո Ւ Ն

Աշնան երգը սկսվեց. բարդիներն են շշնջում
Պարմանի պես վարանոտ, հեզաճկուն կաքավում,
Կարծես վազում ընդառաջ սևաչ, վառվռուն պատանուն,
Քնքուշ նազով են խայտում բարդիները դաշտերում։

Ծունչը փարթամ ոստերի, մերթ զորեղ, մերթ նվաղուն,
Օդը լցնում է խինդով, աշնան բերքի ժպիտով,
Գորգի վրա մարգերի չոր տերևներ են թափվում,
Քամու շնչից փոփոխուն՝ խճանկար են կազմում։

Անտառներից մեր Սոսյաց տոնական շունչը կարծես
Աշնան բերքի հետ եկել, մեր շեներում է լցվել,
Կարասն է մեր լի գինով, մառանն է մեր լի բարով,
Անզուսպ մի երգ հեթանոս աշնան շնչով է պոռթկում։

Ցանի՛ր աշնան դաշտերում ոսկի սերմը ցորենի,
Զմռան տաքուկ ձյան տակ գալիքի երգն հորինիր,
Ծիծեռնակներն երբ դառնան, ծիծաղդ աղբյուր թող լինի,
Շեներից մինչ դաշտերը բերքը օրհնյալ թող լինի։

Սեպտեմբեր 1986

ԶԳՏՈՒՄ

Մենք ինչե՞ր ունենք դեռ կատարելիք,
Դեռ երկար ճամփա ունենք կտրելիք.
Դուք տարբեր ճամփից եք գնում առաջ,
Մեր ուղին ուրիշ, ուրիշ է ձերից։

Մեր ավերակներն վեր են հառնելու,
Մեր մեռելները՝ անմահանալու,
Մեր սրբություններն են կյանք առնելու,
Դուք նախնիր, ավեր մեզ պես չեք տեսել։

Եթե խոսելու լեզու ունենան
Խոնարհված բոլոր մեր սրբություններն,
Այնժամ դուք միայն լավ կճանաչեք
Մեր կյանքի ուղին, մեր տունն ավերակ։

Մենք կառուցում ենք, վերակառուցում,
Սխալն ենք ուղղում, փլվածը՝ կերտում,
Մի օր մենք փառքով կդիմավորենք
Ձեզ, ո՛վ եղբայրներ, մեր նախնյա՛ց փառքով։

Օգոստոս 1988

ԼՈՆԴՈՆ

Տարիներ անց վերստին գալիս եմ քեզ տեսության,
Կարոտն է ինձ պարուրել ծանոթ երգի թովչանքով,
Վերհիշում եմ պարզ հատակ օրերն անցած՝ մտովի,
Որպես անանց մի երազ, անսկիզբ ու անվախճան։

Ման եմ գալիս ես կրկին զբոսայգում ինձ ծանոթ,
Ի զուր անցյալս եմ փնտրում ու չեմ գտնում՝ հուսահատ,
Հին օրերը, գերթ երազ անհետ կորան գնացին,
Մի քաղցր հուշ է հառնում հին օրերից, հուզում ինձ։

Տարիներ անց եկել եմ, իմ անցյալն եմ վերհիշում,
Որքա՜ն ծաղիկ որքա՜ն սեր խամրել, փոշի են դարձել.
Անցո՛ղդ, կանգնի՛ր և հիշի՛ր, քանի՜ մարդիկ են անցել,
Այս ճամփեքով գնացել, անհուշ կորել, չքացել...

Ամեն բան իր տեղում է՝ այգի, ճամփա, հուշարձան,
Լոկ ժամանակն է սահել տարել, կորցրել է շատ բան,
Կա՜նգ առ, սպա՜ք, սթափվեմ, թևեր առնեմ թռածեմ,
Անուրջի մեջ անցյալի հին հույզերս որոնեմ։

Նոր են մարդիկ, ամենուր կյանքն է եռում փոթորկվում,
Հին ճամփեքին նոր մարդիկ նոր երազներ են հյուսում,
Կյանքն է հոսում հին հունով, նման Թեմզին ետ-առաջ,
Ի՞նչ եմ փնտրում ես այստեղ... ես որ դարձել եմ օտար։

Հունիս 1987

ԼԻԱԼՈՒՍԻՆ

Թափի՛ր արծաթը լուսառատ ծոցիդ,
Կարոտ ենք, կարոտ փառահեղ ցոլքիդ,
Ներկի՛ր աշխարհը գույնով քո զվարթ,
Շռայլ, մեծասիրտ մարդու պես հպարտ։

Սփռի՛ր գիշերվա լռության մեջ խոր
Մարդկության վրա շնորհներդ անհուն.
Տո՛ւր նինջ ու անդորր, երազ հոգեթով
Տառապող մարդուն, հոգնած, հոգեխռով։

Եվ մխիթարի՛ր նրանց, որ անքուն
Սպասում են քո օրհնաբեր այցին,
Ո՜վ մխիթարանք լուսե թևերով,
Հասի՛ր անտունին, անտերին փութով։

Դու՝ ա՛չք երկնային, դու՝ ամենատե՛ս,
Դո՛ւ՝ լույս պատուհան ծոցում խավարի,
Լույսդ ցոլացրու իբրև հայելի,
Խավարն իմ վանի՛ր շողով քո փառքի։

Օգոստոս 1988

Ա Ս Ի Զ Ի

Ուխտավորներ խաղաղության աղերսով
Ողջ աշխարհի չորս ծագերից հավաքվել,
Ծոմապահում, աղոթում ենք, պաղատում,
Որ Դու լսես մեր աղերսն ու ողորմես,

Մեղքե՞րն արդյոք մեր անհամար, անպարփակ,
Թե՞ քարացած, ապար դարձած մեր սրտերն,
Տե՛ր, փակել են ողորմության դուռը Քո,
Հասի՞ր Դու մեզ՝ կորուսելոցս օգնության:

Աշխարհն է մեր ալեկոծվել, փոթորկվել,
Ազգ-ազգի դեմ թշնամացել է քենով,
Սև ամպի պես ատելությունն է դիզվել,
Արդարության կանչն է խեղդվել, խլացվել:

Մահվան զենքեր դու մի՛ շինիր կուտակիր,
Եղբա՛յր անգին, Կայե՞ն ես դու դառնալու...
Փշրի՛ր զենքերդ, խաղաղությա՛ն ծառայիր,
Ողջ մարդկության եղբայրության դու ձգտիր:

Մենք՝ ուխտավոր, լեռների մեջ սրբազան,
Ասիզացու անվամբ կոչվող քաղաքում,
Մեր ձեռքերում ձիթենու ոստ ու շրթին
Խաղաղության կոչն ենք բերում աշխարհին:

Ողջո՛ւյն սիրո և հաշտության, քեզ, եղբա՛յր,
Իմ հարազատ, իմ հեռավոր մերձավոր,
Բիբլիական հայ աշխարհից քեզ ողջո՛ւյն,
Խաղաղությո՛ւն ալեկոծված աշխարհին:

Հոկտեմբեր 1986

ՄԱՅՐԱՄՈՒՏ

Մթնշաղին դու մեկնող
Կարմիր արև դալկադեմ,
Նման վարդի ուշ աշնան՝
Գունատ, հիվանդ ու նսեմ:
Մայրամուտին դու հյուծվող
Ճրագ կյանքի սպառվող...

Կայտառ մանուկ դու գարնան
Խոստումներով անսահման:

Օգոստոս 1988

ՀՌՈՄ

Ես՝ այցելու քաղաքին հին Հռոմի,
Անցնում եմ նեղ ու խճողված ճամփեքով,
Դիտում եմ քեզ հիացումով, կլանված,
Հին-նոր Հռոմ՝ քաղաք եռուն, կենսասեր:

Նոճիներիդ անտառում ես փնտրեցի
Հին փառքերիդ հերոսներին պանծալի:
Հուշարձաննե՞ր՝ այս ու այն տեղ սփռված,
Աստվածացյալ կեսարների անունով:

Հին փառքերիդ անցյալի վրա հեթանոս
Կոթողվել են նոր կրոնի տաճարներ
Երկնասլաց գմբեթներով, լայնանիստ,
Նորով հիմա հին մեղքերդ են աքողել:

Ահա՛ տաճարը փառավոր Պետրոսի,
Այստեղ Պողոսն արձանացած, հիասքանչ,
Սուրբ Տիրամոր, Կարապետի տաճարներն
Իրենց տեսքով թև են տալիս երազիս:

Հռո՜մ, Հռո՜մ, հավերժության դու օրրան,
Սուրբն ու անսուրբն իրար ձուլված, իրար մոտ,
Լույս ու ստվեր կարծես լինեն քո գրկում,
Իրար ատող, բայց իրարից անբաժան:

Սիրեցի ես քո սրբությունն անսահման:

Հոկտեմբեր 1986

ԼՈՒՍԵՐԳ

Նորից բացվեց առավոտ,
Լույսը տիրեց աշխարհին,
Խավարն, ահեղ բռնավոր,
Պարտվեց լույսից փառավոր:

Գիշերն անցավ, մոռացա՜
Անքուն ժամերս իրիկվա.
Մխիթարա՜նք իմ կյանքի,
Լույս՝ կենսատու գալիքի:

Օրն է պայծառ, լուսառատ,
Սրտումս հազար երգ, խայտանք,
Թռչում է օրն աննկատ,
Թևածում եմ կյանքից-կյանք:

Սեպտեմբեր 1988

Գ Ի Տ Ե Մ...

Որ աշխարհի մի անկյունում
Մի բուռ հող է ինձ սպասում,
Ուշ կամ կանուխ, Աստված գիտե,
Այդ հողին եմ ետ դառնալու:

Սակայն սիրտս սիրով հորդուն
Ես ո՞ւր տանեմ, ես ո՞ւր թաղեմ,
Օտար հողում եթե ննջեմ,
Կրկին անգամ ես կմեռնեմ:

Սիրուն վայրեր՝ շա՜տ աշխարհում,
Մեկը մյուսից ճոխ, առինքնող,
Բոլորն են ինձ հրապուրում,
Բայց ես քեզնով եմ սփոփվում:

Սիրտ իմ, հավետ թափառական,
Արդյոք որտե՞ղ մի օր հանկարծ
Դու կանգ կառնես ու կհանգես...
— Սիրտ իմ, դու ինձ չես դավաճան,

7 Օգոստոս 1991

Հավերժ պատարագ

Ա Ղ Ե Տ

(Հայաստանում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի առթիվ 7 դեկտեմբեր 1988):

Ո՜ տայր... զաչս աղբևրս արտասուաց, և
լայի զժողովուրդս զայս զտիւ և զգիշեր»
(Երեմիա 9):

Ես ինչպե՞ս սգամ, ասա՛ ինձ, Աստվա՜ծ,
Մեր բյուր բյուրավոր աղետյալներին:
Սիրտս է արյունում, տրտում եմ, տկար,
Արհավիրքի դեմ՝ անբառ, անբարբառ:

«Եղիցի կամք քո». մեռնե՞նք, չքանա՞նք...
Բայց երբեք մահից մենք չենք վախեցել,
Միայն պարտ է մեզ մարդո՛ւ պես մեռնել,
Մարտիկի նման պատվով, համարձակ:

Մահվան դեպքում մենք թող այնպես մեռնենք,
Ինչպես դիմել են մահվան մեր նախնիք.
Ծարավով, տենչով լոկ արդարության,
Անշեջ տեսիլքով բարու հաղթության:

Մեր հարք ասել են. «Մահ ոչ իմացեալ
Մահ է» և կորուստ, իսկ «մահ իմացեալ՝
Անմահութիւն է»: Պատգամն այս վսեմ
Պահած մեր սրտում՝ ապրենք աշխարհում:

Իբրև աղետյալ, մի՛ թող ընկնենք, Տե՜ր,
Առանց պայքարի և աննպատակ,
Մի՛ թող զոհ դառնանք մենք արհավիրքի՝
Փլատակներում կքած շենքերի:

Թող ընկնենք մարտո՛ւմ, պայքարի դաշտո՛ւմ,
Կռվենք չարի դեմ վասն արդարության,
Թափենք մեր արյունն հանուն հայրենյաց,
Քաջի պես ընկնենք՝ մեր արտից խոցված:

Արհավի՞րք էր սա, թե՞ սև պատուհաս,
Մեր գլխին եկած այսքան վաղահաս,
Մեր մեղքը ո՞րն էր, ո՞րն էր մեր հանցանք,
Տե՛ր, աղե՞տ էր սա, թե՞ սև պատուհաս:

Մենք այս օրերին վասն արդարության
Դարձած մարտիկներ՝ դոներ թակեցինք,
Խիղճեր փորձեցինք. լուռ էին նրանք,
Անտարբեր, անհոգ, մեր հայցի դեմ փակ:

Մեր տունը լցվեց գաղթականներով,
Մեր հայ եղբայրներն հարևան երկրից
Տուն էին եկել ահով, սարսափով՝
Խույս տալով մահից, թշնամու սրից:

Շատերն հայերից նահատակվեցին
Իրենց տներում ու փողոցներում,
Փոքրին ու մեծին չխնայեցին
Սումգայիթ կոչվող տխուր քաղաքում:

Տուն դարձան ոմանք, հուսահատ, լքուն,
Հայրենի հողում դրին իրենց բույն,
Բայց հազիվ բուժած վերքերն իրենց խոր՝
Ծայր տվեց հանկարծ աղետն ահավոր:

Զերթ ծով փոթորկվող հողն ալեկոծվեց,
Ահեղ դղրդմամբ աշխարհը շարժվեց,
Քառասուն վայրկյան երկիրը ցնցվեց,
Գյուղ, քաղաք քանդեց, բյուր կյանքեր խլեց:

Փլվեցին շենքեր, տներ, դպրոցներ,
Մանկապարտեզներ, հիվանդանոցներ,
Փլվեցին բազում արհեստանոցներ,
Թաղվեցին բազում շինարար ձեռքեր:

Աղետը քանդեց մեր տունն աղոթքի,
Կարծես եկել էր վերջը աշխարհի.
Աղետն այդ անկուշտ, արհավիրքն այդ կույր,
Ինչ որ հանդիպեց, քանդեց, տվեց կուլ:

Աշխարհը մեր շեն դարձավ գերեզման.
Լացեր ու կոծեր, կանչեր օգնության,
Խելագար ճիչեր, պաղատանք, ողբեր
Հանկարծ լցրեցին լեռ, դաշտ ու ձորեր:

Քիչ առաջ այնտեղ կյանքն էր բորբ եռում,
Իսկ այժմ մահն է եղերերգվում,
Մի րոպե առաջ՝ ծիծաղ, խնդություն,
Այժմ՝ փլատակ և մեռելություն:

Տե՛ր, որպեն էր այդ, որպեն չարիքի,
Զլանայիր մեզ թող այդ պահն ահի,
Հեռու տանեիր բաժակն այս լեղի,
Թող շարժը լիներ դաշտում ամայի:

Օ՜հ, ցավի՛ որպե՛, որպե՛ քանդումի,
Ո՞վ ինձ ետ կտա պահն արարումի,
Մեր տան հետ փլվե՞ց, քանդվե՞ց մեր հոգին,
Վշտի ու ցավի ատակ մեր հոգին:

Այսքան ավերակ, այսքան արհավիրք,
Զոհեր բյուրավոր մենք ինչպե՞ս ողբանք.
Վշտից ցամաքեց արցունքն իմ աչքի,
«Եղէ ես որպէս բու յաւերակի...»

Ցավն այս հոգեմաշ սահմանը անցավ,
Լապտերը հույսի հողմերից շիջեց,
Կայծակը զարկեց, մեր ծառը ճեղքեց,
Աղետը մեր տան հիմքերը սարսեց:

Մեր աչքի առաջ լույսը խավարեց,
Խավարը եկավ աշխարհը պատեց.
Մի պահ կարծեցինք հայ ազգը մեռավ,
Մեր դալար ծառը ընդմիշտ չորացավ:

Ապավենը մեր դո՛ւ ես, դո՛ւ միայն,
Միայն դո՛ւ գիտես սրտերի ճամփան,
Ո՛ւժ տուր, վե՛ր կանգնենք, մեր տունը կերտենք,
Չարակամների ծաղրը անգոսնենք:

Թշնամին չեղավ պատճառը մահվան
Բյուրավոր որդվոց զարմին հայկազյան,
Մնացինք անզոր, շփոթ ու անկար,
Բնության առաջ՝ կարկամյալ, անբառ:

Քո ողորմության դռները բա՛ց, Տե՛ր,
Վշտով ու սուգով լցվեց կյանքը մեր,
Աղետն հանգցրեց հույսի մեր ճրագ,
Մնացինք շվար, տո՛ւր մեզ սփոփանք:

Վշտից մեր աչքերն ընդմիշտ չորացան,
Ծիծաղ ու ժպիտ ողբ ու կոծ դարձան,
Կոկոնը թփի մեր թառամեցավ,
Մանկանց ճիչն ուրախ երկրից վերացավ:

Հուսահատությունն, անգույն ու տժգույն,
Անսպասելի իջավ մեր հոգուն,
Ողջերը դարձան անտուն, անսվաղ,
Իսկ մեռելները մնացին անթաղ:

Գիշերն երբ իջավ, խավարը պատեց,
Վիրավորների վայն աշխարհ լցրեց,
Փլատակներից ճիչեր ողբաձայն,
Խավարը լցրին կանչերն օգնության:

Ամեն ոք իրն էր ողբում ու սգում,
Գութի ծարավի սրտեր կոտտացին,
Հուսահատ մայրեր խելագարվեցին,
Ո՞վ պիտի բերեր դարման մեր վշտին:

Հանկարծ մարդկայինն ընդոստ վեր կանգնեց,
Աշխարհի խիղճը արթնացավ, ցնցվեց,
Ամեն կողմ կոչեր, կանչեր օգնության,
Սրբազան դաշինք համերաշխության:

Հասան օգնության ձեռքեր մերձավոր,
Եկան օգնության ազգեր հեռավոր,
Բերին սերն իրենց զերթ դեղ մեր ցավին,
Հազար մի բարիք փութով հասցրին:

Տե՛ր, ի՞նչ հրաշք էր սա և ձեռք գթության,
Մեր աղետը խիղճ տվեց մարդկության,
Թշնամանքն անգամ գութով պարուրվեց,
Մեր վերքը դեղվեց, մեր ցավը կիսվեց:

Մի՞թե մենք նոխազ էինք քավության,
Անմեղ պատարագ, զոհ եղբայրության,
Մեր զոհերն այսպես պիտ ամրացնեի՞ն
Կապն եղբայրության համամարդկային:

Տե՛ր, զոհողությունն այս Դու ընդունի՛ր
Իբրև պատարագ վասըն հաշտության,
Մեր զոհերն ընկա՛լ մեջն արքայության,
Նրանց թանկ արյամբ մեղքերն մեր քավի՛ր:

Հավատում եմ, որ բարին է իշխում
Մեր այս աշխարհում և միշտ պայքարում
Անսանձ չարի դեմ, անարդարության,
Վերջում սերն է միշտ հաղթում բռնության:

Քո մարդեղության այս սուրբ օրերին
Մեր ցավն ամոքի՛ր, մեր վերքը բուժի՛ր,
Սգավորներիս եղի՛ր մխիթար,
Մեզ ո՛ւժ պարգևիր, ո՛վ Տեր բարերար:

Հակառակ բոլոր մխիթարությանց
Եվ մեզ կարկառված ձեռաց օգնության,
Հակառակ բազում խոր վշտակցությանց,
Մեր վերքն է կոտտում, մեր սիրտը՝ քամվում:

Ճակատագրի հետ ես չեմ հաշտվում,
Ընդվզում եմ ես, անվերջ բողոքում,
Ո՞վ մեզ ետ կտար մեր զոհվածներին...
Որքա՜ն վարդ խամրեց հայոց պարտեզում:

27 դեկտեմբեր 1988

ԲՈՂՈՔ

Աշխարհն է դարձել նյութապաշտ, անկուշտ,
Խիղճ ու գութ չքվել, ո՞ւր են գնացել...
Ո՞վ արդյոք մեզնից իսպառ կողոպտեց
Զգացմունքները ազնիվ մեր հոգու։

Մարդիկ դարձել են կույր, անհեռատես,
Տեսնում են միայն անձն իրենց կարծես,
Նրանց խոսքն է սին, փրփուր, իսկ իրենք՝
Անվստահելի և միշտ ուխտադրուժ։

Ամեն բանից վեր շահն իրենց դասում,
Շահատակում են, խտիր չեն դնում,
Չկա սրբություն, չկա ուխտ, խոստում,
Չկա ոչինչ սուրբ, ոչ մի համոզում։

Նրանք կարող են ամեն ինչ անել,
Կաշառք վերցրնել, խեղճին կողոպտել,
Դատել անարդար, գողանալ, ստել,
Պաշտոն ստանձնել, նախաթոռ լինել։

Նրանք կարող են շենքեր կառուցել,
Դրանց ցեմենտն ու երկաթը ծախել
Եվ առանց դույզն խղճահարության
Դրանով մարդկանց շինել գերեզման։

Նրանք կարող են հարգ ու ճորտ պահել,
Վաճառքի հանել խիղճ, սիրտ ու հոգի,
Տունն իրենց դարձնել հրաշք պալատներ,
Գողացված փողով ոսկի հորթ կերտել։

Կորել է պատիվ ու բարոյական,
Մի մոմ վառելով աղոթք չի լինի,
Մոմով մի՛ ծեփիր ժահրը քո հոգու,
Մեղքդ ծածկելով պատժից չես փախչի։

Սքեմը անգամ մարդուն չի փրկի,
Դա՛րձն է կարևոր, որ անձը փրկվի.
Աղոթքով սրտիդ պատերը քերի՛ր,
Սրբության համար լայն տեղ պատրաստիր։

Ո՞ւր ենք մենք հասել և ո՞ւր ենք գնում.
Ո՞վ պիտի ցնցի, սթափեցնի մեզ,
Որ անդրադառնանք ու շուտ ետ դառնանք
Անդնդի եզրից, նորից մա՛րդ դառնանք։

Խաբելը մեղք է և ո՛չ քաջություն,
Մեղք է գողանալն՝ ո՛չ հերոսություն,
Խարդախն իր արյունն է հար պղտորում,
Նրա որդիքն էլ նորմալ չեն ծնվում։

Ո՞ւմ ենք մենք խաբում, ումի՞ց գողանում,
Մի՞թե նույն հողի ծնունդները չենք,
Ինչո՞ւ, Տեր Աստված, այսպես խմբովին
Դավաճանում ենք մեր իդեալին։

Մենք երկուսով էլ, օ՜հ, մեղավոր ենք,
Բա՛վ է կեղծելով մենք միմյանց խաբենք,
Մի՞թե հայրենիք, հող ունենալու
Եվ ծաղկեցնելու մենք արժանի չենք։

Ն. Վանական

Ես նախանձում եմ բարի նախանձով
Եվ բարին մաղթում վշտի օրերին
Աշխարհի բոլոր ժողովուրդներին,
Հայրենիք կերտող, քրտինք թափողին:

Դա՜ռ իմաստության և զգաստության...
Դարձի՛ր, ով եղբայր, մոլորությունից,
Գործի՛ր հավատով, արդար ջրտինքով,
Որ որդիքդ ապրեն քեզ օրհնանք տալով:

Զգտի՛ր վսեմին, գեղեցկին, բարուն,
Պատմությունն ազգիդ դու լա՜վ սովորիր,
Ծանի՛ր քեզ նորից, չարն իսպառ վանիր,
Քո եղբոր համար կյանքդ նվիրիր:

Անարատ հոգով, անխախտ հավատով
Սպանենք մեր մեջ մենք չարը փութով.
Հեռու անձնասեր նկրտումներից՝
Դառնանք իրարու հավետ լծակից:

25 դեկտեմբեր 1988

ՌԵՔՎԻԵՄ

Փառք քեզ, Աստվա՛ծ, փառք հավիտյան
Տիեզերքի ստեղծողին,
Փառք երկնքի բարձունքներում,
Տիեզերքի ողջ տարածքում:

Հավիտյանից մինչ հավիտյան,
Արարիչ Դու ամենեցուն,
Փառք ու պատիվ, խոնարհություն
Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն:

Փառքի առաջ Քո լույս դեմքի
Վեցթևյան բյուր սերովբեներ,
Բազմաչք բազում քերովբեներ
Երանավետ ցնծում էին:

Դասն անհամար հրեշտակների
Երգում էր դաշն, քնքուշ ձայնով,
Տյառն Աստուծո փառքն էր հյուսում,
Գովաբանում սուրբ երգերով:

Տերն արարեց աշխարհն համայն
Ծրագրերին Իր համաձայն,
Մարդուն կարգեց տեր, պահապան,
Ստեղծածն Իր շնորհեց նրան:

Ադամն ըմբոստ, անհնազանդ,
Դրժեց խոստումն սկզբնական,
Սողոսկեց մեղքն օձի նման,
Մարդը դարձավ նենգ, դավաճան:

Այսպես անա ծնվեց, ավա՜ղ,
Բարու, չարի պայքարն անեղ,
Բարին լավը միշտ պարտեց,
Վատն էլ լավը խեղաթյուրեց:

Ժամանակներն երբ լրվեցին,
Սիրո իբրև գրավական
Տերն առաքեց Իր իսկ Որդուն՝
Քավելու մեղքն ադամորդուն:

Նա որպես մարդ մեր մեջ ապրեց,
Սերն երկնածին մատուցեց,
Մի օր մարդկանց ձեռքով դատվեց,
Ձերթ մեղավոր խաչ բարձրացվեց:

Խաչի վրա արյուն թափեց,
Զոհվեց անմեղ գառան նման,
Իր արյունով լվաց, սրբեց,
Քավեց մեր մեղքն ադամական:

Երեք օր վերջ իր թաղումից,
Ըստ իր խոստման, Տերը հարյավ,
Իր հարությամբ հաղթեց մահվան,
Կյանք պարգևեց անհույս մարդկանց:

—Ո՜վ գերազանց զոհողություն—
Մարմին առավ, մարմնացավ Բանն,
Աստված իջավ, աշխարհն օրհնեց,
Բոլոր մարդկանց կյանք պարգևեց:

***

Ողբում ենք մենք, սգում, լալիս
Եվ պաղատում, ծնկի գալիս,
Ի՞նչ աղետ էր զարհուրելի,
Ի՞նչ արհավիրք քստմնելի:

Աղետյալներ բյուր-բյուրավոր,
— Երկրաշարժի անմեղ զոհեր—
Հոգին իրենց ավանդեցին,
Առանց անգամ անդրադարձի:

Տե՛ր, ընդունի՛ր նրանց հոգին,
Աղերսում ենք, նրանց ների՛ր:
Նրանց մեղաց տո՛ւր քավություն,
Արդարների շարքում դասիր:

Խնդրում ենք Քեզ ու պաղատում,
Պահք ու ծոմով Քեզնից խնդրում,
Որ ընդունես նրանց հոգին,
Արժանացնես փառքի շողքին:

Խաղաղություն տուր երկնային
Մեր տարաբախտ զոհյալներին,
Իմաստությամբ մեզ զարդարիր՝
Ծառայելու Քեզ անձանձիր:

Պահի՛ր անփորձ ազգը հայոց
Տարերային աղետներից,
Մի՛ ենթարկիր էլ փորձության
Մեր նվիրումն ամբողջական:

Ո՛վ երկնային սուրբ պատարագ,
Դու երկնառաք մխիթարանք,
Ուստ՛ մեզ, Տե՛ր, զոհություն,
Ներել նույնիսկ մեր թշնամուն:

Օվսաննա՜ Քեզ բարձունքներում,
Օվսաննա՜ Քեզ մեր սրտերում,
Հավե՛տ օրհնանք և գոհություն
Օրհնյալ Հոր մեր՝ Տեր Աստծուն:

27 դեկտեմբեր 1988

«ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ»

Ցավին իմ անհուն օվկիանի պես խոր
Տո՛ւր սպեղանի, բուժի՛չդ ամենքի,
Հույսն իմ հեռավոր, աղոտ, մոտեցրո՛ւ,
Փառքիդ լույսով աչքն իմ պայծառացրո՛ւ:

Անձս բեկբեկված դու միավորի՛ր,
Ցնցված հոգուս անդորրություն տուր,
Առկայծ ճրագն իմ հոգու բորբոքի՛ր,
Հույսի առագաստն իմ դու նորոգի՛ր:

Խամրել է բողբոջն զգայարանքիս,
Դարձել է ամուլ հունտը նոր կյանքի.
Բեկված թևերով անզոր ու վատուժ
Չեմ կարող թռչել, անկար եմ ես հույժ:

Անիմանալի խորհուրդ լուսաճեմ,
Ինչպե՞ս ըմբռնեմ քեզ, իմը դարձնեմ.
Ո՛վ դարերն հյուսող շաղկապ ամրակուռ,
Տիեզերքն ամբողջ համադրող բևեռ:

Բա՛ց իմ աչքերը, մեզն իմ փարատի՛ր,
Քո անհաս փառքի լույսը պարգևի՛ր,
Որ տեսնեմ, զգամ, հրճվեմ ու պաշտեմ,
Փառք տամ, գովերգեմ, քեզ հավե՛տ օրհնեմ:

15 մայիս 1989

ՎԻՐԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Երբ խոցվեցիր տարերային աղետից,
Շատերն եկան կարեկցանքի խոսքերով
Եվ վերքերիդ սպեղանի փութացրին,
Վիշտ ու ցավդ խոսք ու գործով մեղմեցին։

Դու վիրավոր, որդեկորույս մոր նման,
Անմխիթար, բզկտված հոգիով
Մահվան տագնապը ապրեցիր հոգեխռով,
Ցավն անամոք քեզ զգետնեց, տապալեց։

Ամիսներ վերջ դու կանգնել ես տանջահար,
Նոր ես զգում չափն աղետին անավոր,
Հիմա արդեն մարդիկ դարձած անբարբառ՝
Քեզ նայում են հանգած հոգով, անտարբեր։

Քո՛նն է այժմ հերթը գործի, սթափվի՛ր,
Ուժերդ ամբողջ համախմբի՛ր, ամփոփի՛ր,
Որպեսզի դու վերածնվես ու ապրես.
Քաջի նման հարկ է կանգնես ու ներտես։

26 մայիս 1989

Սան Անտոնիո

ԲԵԹԻՆԱ ԼՈՐԻ

Ալպյան լեռնային մանուշակների
Ընտրելագույնն ես
Եվ Քուր քաղաքի լեռների հովտաց
Շուշանն ես անբիծ։

Սարն ի վեր ձգվող ձեր այգիների
Կութքն ես արևառ
Եվ սեղաններին խինդ, եռանդ տվող
Գինին բուրավետ։

Դու եկել էիր մեր երկրաշարժի
Աղետի պահին՝
Ավերակների տակից հանելու
Ողջեր, մեռյալներ։

Օրեր շարունակ հանգիստդ թողած՝
Օգնեցիր մարդկանց,
Վրանների տակ ցուրտ գիշերների ։
Վիշտդ գրկեցիր։

Մարդասիրությունն ու սերն էր բերել
Քեզ ի Հայաստան,
Կարճ ժամանակում շտապ փութացիր,
Հասար օգնության։

Վարժեցրած շանդ հետ հողը պեղեցիր,
Կյանքեր փրկեցիր,
Եղար մի հրեշտակ՝ երկնքից իջած,
Կարծես մի օրհնանք։

Տեսար մեր աշխարհն ավեր ու քանդված,
Միրտը մեր՝ փլված,
Տխուր հեռացար, խոցված, վշտահար,
Մեզ չմոռացար։

Մեր քաղաքամայրն անգամ չտեսար,
Շտապ չվեցիր,
Նոյան մեր հողի աղն ու հացն անգամ
Չհամտեսեցիր։

Գնացիր չքնաղ քո երկիրն ծաղկուն,
Մարդկանց պատմեցիր
Ընկճված սրտով աղետի մասին
Եվ հեկեկացիր։

Եվ այդ օրերից դեռ մինչև այսօր
Հետևում ես մեզ,
Մեր ճակատագրով ես մտատանջվում
Ու սրտակցում մեզ։

Ալպյան մանուշակ, խոնարհ ու քնքուշ.
Ո՞ր հրաշքն արդյոք
Իմ ձեռքից բռնած քեզ մոտ բերեց ինձ
Ու երջանկացրեց։

Հանդիպելով քեզ՝ ես խոնարհվեցի
Վեհ հոգուդ առաջ.
Անձիդ միջոցով փառավորվեն թող
Նմանները քո։

18 սեպտեմբեր 1989

ՇՈՒՆՉ ՀԱՐՈՒԹՅԱՆ

Շունչն է ահա հարության...
Ողջ երկիրն է արթնացել,
Չոր ճյուղերի մեջ թաքուն
Ավյուն ու կյանք է լցվել։
Թրրթրոում է աննկատ
Եվ երկնում է ցնծագին
Ամեն մեկ ծառ, ամեն թուփ՝
Գարնան տենդով վարարուն։

Անցյալ ձմեռը բերեց
Մռայլ օրեր, սուգ ու սով,
Աղետն եկավ ու սարսեց
Երկիրը մեր զայրույթով.
Փլավ մեր տունն ու դարձանք
Անապաստան, աներդիկ.
Քանի՞ անգամ է փլվել
Տունն այս, «տո լա՛ճ տնավեր»։

Գառնո տաճարն հեթանոս
Աստվածների փլվել է.
Տաթև, Անի, Զվարթնոց
Եվ այլ բազում տաճարներ
Երկրաշարժից կործանվել,
Ավերակույտ են դարձել,
Բայց նորից վեր են հառնել,
Հայի ձեռքով կյանք առել։

Քանի՞ անգամ չվել է
Հայ ծիծեռնակն իր բնից,
Գաղջ վայրերի տենչանքով
Նոր բույն, նոր կյանք որոնել։
Ո՞ր ես գնում, հեռանում,
Դու թռչուն չես թևավոր,
Նեղ օրերին դիմացիր,
Քո տան այունը դու դարձիր։

Հող, հայրենիք ունենալ
Մեր հայրերն են տենչացել.
Երբ կործանվել է Անին,
Կիլիկյան Տունն ենք հիմնել.
Երբ Կիլիկիան ենք կորցրել,
Նորից մեր տունն ենք դարձել,
Արյուն հեղել, պայքարել,
Հողին փարված մնացել։

Գիր ու գրչով ենք սնվել
Խաղաղության օրերին,
Սուր ու զենքով դեմ դրել
Ոսոխի մութ դավերին։
Ոսոխն է մեզ նվաճել,
Երբ միաբան չենք եղել,
Դավերի դեմ մահաբեր
Միությա՛մբ ենք դիմադրել։

Վատ օրերը կգնան,
Կմոռացվի աղետն էլ,
Կհալվի ձյունը ձմռան,
Նորից գարուն կբացվի։
Հավատը քո նորոգի՛ր,
Մեր սուրբ հողին դու փարվի՛ր,
Նոր հույզերով տոգորված՝
Տեսիլդ կյանքի վերածի՛ր։

Մեր լեռներում հայկական
Նոյան տապանն է հանգչել,
Իբրև թագ ազատության
Մասյաց ճակատն պսակել։
Եղի՛ր սարիդ պես հպարտ,
Համբերատար և ուշիմ,
Ժամն է ահա արարման,
Կյանքովդ կյա՛նք տուր գալիքին։

Հունվար 1989

ՄԽԻԹԱՐԱՆՔ

Լալիս եմ անվերջ, արցունքս է արյուն,
Կապանք է դրել ցավը իմ սրտում,
Ձեռքերս ու ոտքերս ինձ չեն ենթարկվում,
Իմ սրտի խորքում վիշտն է մորմոքում։

Որքա՜ն մանուկներ անմեղ զոհվեցին,
Հազա՜ր-հազարներ անհետ չքացան.
Ենթգ թշնամու պես, գողի պես եկար,
Մեր ծաղկուն ոստանն արիր քար ու քանդ։

Սրտիս խորքում վիշտ սերմանեցիր դու,
Երիկամներս անհագ կրծեցիր,
Ճանկռեցիր աղիքս ու գալարեցիր,
Աղե՜տ, մեր տան մեջ դու ահ սփռեցիր։

Այս արհավիրքից վիրավոր հոգուս
Դու ձգտում, տենչանք անեզր ու անհաս.
Ո՜վ մխիթարանք, երկնառա՜ք օրհնանք,
Իջի՜ր իմ վրա զերթ բարեգութ ձեռք։

28 դեկտեմբեր 1989

1 9 8 9

Տասնյակ հազար մարդ թաղեցի,
Սգավոր եմ ու վիրավոր,
Որքա՜ն պիտի ես լաց լինեմ,
Արցունքներովս ծովեր լցնեմ։

Ես ո՞ւմ պիտի վիշտս պատմեմ,
Ես՝ վշտաբեկս ու տնավերս.
Չունեմ ոչ ոք, որ ինձ լսի,
Դարման գտնի, ցավն այս բուժի։

Կշտացել է երկիրն հայոց
Արյուն, արցունք, մահ տեսնելուց,
Աշխարհս դարձավ մեծ գերեզման,
Հազար խաչքար ո՞նց կառուցեմ։

Տարին մի՞թե հեշտ գլորվեց,
Որքա՜ն սուգ, վիշտ մեր վրա թափվեց.
Շատեր փախան, չդիմացան,
Քաջերն հողից չհեռացան։

Բայց դառն օրերն այս կավարտվեն,
Կգան օրեր ուրախության,
Նորից երգ ու պար կհնչի,
Աղբյուրներից գինի կհոսի։

30 դեկտեմբեր 1989

ՍԻՐՏ ԻՄ

Բաքվի հայ զոհերի հիշատակին

Սի՛րտ իմ, ճմլվի՛ր ինչքան կարող ես,
Ամեն ճմլումից կյանքս է տրոհվում,
Ինչպե՞ս հայ լինել առանց տառապանք
Այս դառն օրերին, սի՛րտ իմ, ճմլվի՛ր։

Արյուն է կաթում ճմլումից, ցավից,
Այս որքա՞ն ծանր է, Աստված իմ, բա՛վ է
Ցավի մեջ ծնվել, ցավով մեծանալ,
Ոսոխի սրով կյանքից հեռանալ...

Այս ցավի դիմաց, սի՛րտ իմ, դիմացի՛ր,
Մեր կյանքը վաղուց վշտով է հյուսվել։
Ա՛զգ իմ, մեծացի՛ր, զորացի՛ր, ծաղկի՛ր,
Ցավն այս նվաճի՛ր, անվհատ ապրի՛ր։

— Չէ՛, ես չեմ մեռնի թշնամու ձեռքով,
Ես կապրեմ երկար, միշտ արարելով,
Վիշտ ու ցավի մեջ ծաղիկ փնտրելով,
Հույսի թևերով երկինք թռչելով։

21 հունվար 1990

Ե՛Կ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Փշերի միջից նոր ծաղիկ բացվեց,
Սիրտս ազազուն նոր կյանքով լցվեց,
Սերը հաղթական սրտերում ծաղկեց,
Երկիրն իմ հայկյան սիրով ողողվեց։

Որքան թանկ ես դու, ո՛վ արդարություն,
Առանց քեզ չկա մեզ դադար ու քուն,
Օրհնությո՛ւն հավետ սեր սերմանողին,
Սեր պարգևողին, սեր քարոզողին։

Որքան վատ ես դու, ո՛վ ատելություն,
Փուշ ես ու տատասկ, չբեր անապատ,
Տոչորող տապ ես, մահու ուրվական,
Գնա՛, հեռացի՛ր դու շեմքից մեր տան։

Ատելության տեղ թող ծաղկունք բացվեն,
Քաղցր բուրմունքով աշխարհը լցնեն,
Երկիրն իմ ծաղկի օրհնությամբ անանց,
Խաղաղություն գա զերթ երկնային գանձ։

31 հունվար 1990

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

«Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ»

(Շարական)

Այսօր դու մահին մահվամբ հաղթեցիր,
Գերեզմանից զերթ ծաղիկ ծաղկեցիր,
Խավարի, չարի ահը ցրրեցիր
Եվ քո հարությամբ նոր կյանք մեզ տվիր:

Հուսով՝ հուսահատ մեր սիրտը լցրիր,
Խավարն իմ հոգու լույսով վանեցիր,
Կորուսյալներիս գտար, տուն բերիր,
Փրկության ուղին մեր առաջ բացիր:

Այսօր մեղապարտ Ադամը վերցրիր,
Կորստյան գուբից ազատագրեցիր,
Լույսի խորանիդ լուսարար դարձրիր,
Մեռյալին, ողջին քավություն բերիր:

Դու Աստվածորդի, մարմնացյալ դու սեր,
Արդար քո արյամբ մեղքն իմ լվացիր,
Փրկության ջահը մեր մեջ վառեցիր
Եվ քո հարությամբ նոր կյանք մեզ տվիր:

29 Մարտ 1991

Հույս կենարար

ՀՈՒՅՍ ԿԵՆԱՐԱՐ

Փչում է քամին աշնան,
Ծառ ու ծաղիկ տրորում,
Թափում արցունքի նման
Դալուկ, անկյանք տերևներ.
Սուլում ուժգին, մահագույժ
Ոռնոցի պես գայլերի,
Սարսուռ ու դող սփռելով
Փողոցներում ամայի։

Որքա՜ն ամպեր են եկել,
Մեր երկիրն են սքողել,
Ձյուն ու բուք է լեռներում,
Ձմռան ցուրտն է ցած իջնում.
Դողում են թուփ ու ծառեր
Ձմռան աչից ազազուն,
Ջուր է շողում, հուսադրում
Վատուժ արևն երկնքում։

Քամու շնչից այս աշնան
Տխրություն է սփռվել
Մեր աշխարհում, մեր սրտում...
— Հո՛ւյս իմ, դու չե՞ս թառամել...
Երբ լցվի գարնան տենդով
Սիրտը մեր, նոր եռանդով
Ծնորհներդ շռայլի՛ր,
Երազն կյանքի դու կոչիր։

19 հոկտեմբեր 1989

ՀԻՆ ԿԱՂՆԻՆ

Հողմերի մեջ ենք ծնվել,
Հողմերից ենք հար ծեծվել,
Ծյուղակոտոր, շանթահար,
Տերևաթափ ենք եղել։

Կիսել են մեզ երկուսի,
Որ թուլանանք ու մեռնենք,
Չեն իմացել՝ հին կաղնին
Իր արմատովն է հաստատ։

Փետրվար 1989

ՓԱՓԱԳ

Մի վանք լիներ՝ հեռանայի
Եվ առանձին աղոթեի,
Աշխարհն ամեն մոռանայի,
Ներքին աշխարհս որոնեի։

Սարի լանջին, պուրակի մոտ,
Մի հին վանքում ծվարեի,
Առավոտյան աղոթեի
Եվ օրն ի բուն աշխատեի։

Մոտի առվից ջուր բերեի,
Ծառ ու ծաղիկ աճեցնեի,
Քրտինքս արդար ես թափեի,
Ծիլ ու ծաղկին նոր կյանք տայի։

Երեկոյան՝ խոնջած, դադրած,
Աղոթարան ես մտնեի,
Մոմի նման բոցկլտայի,
Լույս սփռեի, սպառվեի։

Աղոթատան մեջ վերացած՝
Տե՛ր, սրբությանդ ես ձգտեի,
Մեղքերս այնտեղ թոթափեի
Եվ անխոով գիշերեի։

Վանքի կշտին, մի տաք անկյուն
Թող քաշվեի ու քնեի,
Երազիս մեջ Աստվածամոր
Լուսե դեմքը վայելեի։

3 մարտ 1989

Մ Ա Ր Դ

Կավից շինված ճրագ ես, ո՛վ մարդ,
Հավատն է քո պատրույգին՝ ձեթ.
Քեզ շնորհված այս Սուրբ Հոգին
Կայծ է անմար ճրագի շրթին։

Պահի՛ր անոթն այդ անաղարտ
Եվ հավատիդ ձեթն՝ անարատ.
Հողմերը թող չհանգցնեն
Լույսը կյանքի՝ կայծը ճրագի։

16 հունիս 1989

ՕՐՀՆԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Հորիզոնից հորիզոն
Հասուն արտերս են ծփում,
Նազպար անում, օրորվում
Քամու շնչից սրսփուն։
Բարկ արևից են ըմպել
Հրդեհն իրենց ոսկերանգ,
Մեր հողերից են ծծել
Ավիշն իրենց կենսառաք։

Հորիզոնից հորիզոն
Հասուն արտերս են նիրհում՝
Օծված լուսնի արծաթով,
Գլուխն իրենց խոնարհում.
Մինչ հասկերի կատարին
Շաղն է իջնում լուսերանգ,
Հարբել են հասկերս ատոք՝
Շաղով, շողով վաղորդյան։

Եվ որաներս հանդերում
Փունջ-փունջ կանգնել են հերթով,
Կալում պիտի տրորվեն,
Դառնան ոսկե հատիկներ։
Լույս ձեռքերով աղջիկներ
Նաշիհ դարձնեն աղալով,
Որ չպակսի իմ երկրի
Օրհնյալ հացը սեղանի։

23 օգոստոս 1989

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂ

Սուրբ է հողը հայրենի,
Արդար՝ բերքը իմ հողի։
Որքա՜ն արյուն է թափվել,
Հողն իմ կյանքով շաղախել,
Որքա՜ն քաջեր են զոհվել,
Մեր սուրբ հողին միացել։

Պիտի ձուլվես ու հալվես,
Օտար հողում չքանաս,
Եթե հողիդ չկապվես,
Հայրենիքդ չսիրես։
Թե աշխարհն էլ նվաճես,
Անհայրենիք չմնաս...
Հավերժ կարող ես ապրել՝
Սերտ կապվելով հողիդ հետ։

Սիրի՛ր հողը հայրենի,
Մի՛ լքիր այն ու փախչիր.
Նա՛ է պապակն ստանում,
Ով սիրում է, պայքարում։
Առանց հողի ո՞վ ես դու...
Հողը մայր է կենսատու...

19 սեպտեմբեր 1986

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԻՔԻ

Շնորհակալ եմ քեզանից հավետ և երախտապարտ,
Որ իմ մեջ դեռևս մանուկ հասակից սերմանեցիր դու
Սերը ճշմարտին, երկյուղն Աստուծո,
Օրհնել ուսուցիր՝ անիծելու տեղ,
Աղոթքի կանգնել, որ երբ կամենամ, հաղորդվեմ, խոսեմ
Իմ արարչի հետ։

Մեր սերմանեցիր իմ մատաղ հոգում՝ փոխարեն քենի և ատելության
Ու վստահություն ներշնչեցիր ինձ՝ փոխան կասկածի,
Գնել ուսուցիր՝ խարդախ լինելու, գողանալու տեղ,
Գութ ու կարեկցանք՝ փոխան մախանքի,
Հույս ներշնչեցիր՝ անհուսությունը դիմագրավելու։

Աղքատության մեջ ինքնասիրությամբ թրծեցիր դու մեզ,
Գոռոզության տեղ՝ մեզ համեստություն ուսուցանեցիր,
Ջոհաբերության ոգի տվեցիր՝ փոխան անհագուրդ
Ընչաքաղցության,
Փորձության պահին պատվախնդրություն դու ներշնչեցիր։

Նեղության առաջ սովորեցրիր մեզ չընկրկել բնավ,
Հարկության պահին՝ լինել համբերող և անհիշաչար։
Իմ անձն կավին ձև ու կերպ տվիր առաքինական,
Այնպես, ինչպես դու ստացել էիր քո ծնողներից։

Ինձ դարձրիր անոթ վերին կոչունքի սպասարկության,
Վառեցիր իմ մեջ ջահը հավատի հանդեպ Արարչի և հայրենիքի՝
Սիրելու ազգն իմ, հարազատներն իմ, լույս ու աշխատանք։
Քեզ բյու՜ր օրհնություն, գոհ եմ Տիրոջից, որ եղել եմ ես
Քո իսկ զավակը և քո միջոցով ծնվել եմ տանջված,
Բայց խաղաղասեր, բայց խաղաղարար իմ ազգի ծոցում։

Եվ ես, որպես հայ, իմ ծնված օրից քեզ հետ և բազում
Ազգակիցների,
Բռնադատվել եմ ճաշակելու միշտ դառնություն ու վիշտ,
Դրանով էլ հենց արժանանալով մեծագույն պատվին՝
Դառնալու խոնարհ չարչարակիցը բյուր չարչարանաց
Հիսուս Քրիստոսի։

4 նոյեմբեր 1989

ՏԻՐԱՄՈՐԸ

Դու քանի՜ անգամ իջար Հայաստան,
Տնից տուն մտար մեզ այցելության,
Դեմքդ աստվածային բացիր հայության,
Շունչ պարգևեցիր մխիթարության։

Ասիր՝ լքված չէ փոքրիկ հոտն հայկյան,
Ժպիտով թախծոտ, մոր գուրգուրանքով
Ապրեցիր մեզ հետ՝ տիրուհի մեր տան,
Եկանք քեզ ի տես սիրով, կարոտով։

Շատեր գրկաբաց քեզ ընդունեցին,
Ոմանք կասկածով քմծիծաղ տվին,
Դու ջերմ մայրական գի՛րկ արարումի,
Օրհնա՛նք երկնային, հու՛յս ապագայի։

Ցավ ու մորմոքի, շփոթի պահին
Իջար երկնքից, մա՜յր գորովագին,
Հույս ներշնչեցիր, սիրուցդ սեր տվիր,
Բեկբեկված սրտերն նոր կյանքով լցրիր։

Սուրբ կույս Մարիամ, մա՛յր արարչության,
Մշտավառ կանթեղ, պայծառ, կենսալի,
Աստղերից իջած ձե՜ռք կարեկցանքի,
Մեր վշտին, ցավին դու դեղ ու դարման։

Դու նորից իջար երկնից Հայաստան,
Ոտնահետքերով միածին Փրկչի,
Վերստին բերիր մեզ հույս հարության.
Հնչեցե՛ք, զանգե՛ր, տո՛ն է արարման։

16 դեկտեմբեր 1989

ՄՈՍԿՈՎՅԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Մոսկվան է այստեղ, փառահեղ, շքեղ,
Կրեմլն է բազմել գետի եզերքին,
Հնգաթև աստղեր կարմիր ճաճանչով
Փորձում են ծածկել ոսկե գմբեթներ:

Գմբեթներից վեր խաչեր վեցթևյան՝
Ձերթ սերովբեներ իջնող երկնքից,
Թևեր տարածուն՝ գրկելու մարդկանց
Հույսի ներշնչման, միմիթարության:

Հիշի՛ր, ո՛վ անցորդ, դեռ մոտ անցյալում
Խաչերի վրա մարդ էին գամում,
Բանտում, աքսորում, անարգում, մորթում,
Իսկ արդ խաչողին խաչն է սպասում:

Այս դամբարանում Լենինն է ննջում.
Ինչպե՞ս անցավորն անանց է դառնում.
Ոմանց պատմությունն է արդարացնում
Եվ ուրիշներին՝ անարգ սյան գամում:

Երեք ճամփա կա կյանքում ապրելու.
Մին՝ ճամփան անկիրք անտարբերության,
Մյուսը՝ ճանապարհ շահատակության,
Վերջինն է ճամփան զոհագործության:

Մեր կյանքում ոչ ոք շահատակությամբ
Չի կարող հասնել գահի անսասան,
Կանչն արդարության է հավերժական,
Պատիժ կգտնի վատը անպայման:

8 հունվար 1990

ԿԱՆՉ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ

Հսկաներն այսպես հանկարծ են ընկնում,
Պատվանդանի տակ իրենց գլորվում,
Ի տես գլորման պապանձվում ես,
Վերհիշում նրանց հոխորտանքն անսանձ:

Խորհում, չափում ես, զարմանքով ասում.
— Փառքը ամպի պես սին է ու թեթև,
Ձվում, ցնդում է ու հետք չի թողնում:—
Ամպը ափի մեջ էլ չի պարփակվում:

Անարդար ճամփով և խարդավանքով
Փառքի դափնին թանկ խլողներն ամեն
Վաղ թե ուշ կընկնեն զերթ աշնան տերև.
Աշխարհում չկա էլ նրանց փրկող:

Տե՛ս, այս օրերին քանինե՞ր ընկան,
Ու քանինե՞ր ենք դեռ պիտի ընկնեն.
Մարդկության արյամբ բոլոր սնվողներն
Ապրել չեն կարող, անիծապարտ են:

Արյունը արդար անմեղ զոհերի
Իր թափված տեղում եռում է, պոռթկում.
Մի օր այդ արյան ճիչն է լսվելու,
Աշխարհ ցնցելու կանչը վրեժի:

Լսի՛ր ուշադիր կանչը դու խղճի...

2 փետրվար 1990

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

Մեկ գիշերվա մեջ այսքան ծաղիկներ
Ձերթ ճերմակ թիթեռ ճյուղերին թառել,
Ծառերս ծիրանի հարսեր են դարձել՝
Գույնով ու բույրով համակ հրապույր։

Ճանապարհների, դաշտերի եզրին
Նրանք կանգնել են՝ ասես ծաղկեփունջ.
Իր լայն թևերով զեփյուռն է բերում
Խունկ ու կինամոն, բուրմունք զգլխիչ։

Գարնան ծաղկունքով, ծիրանի ծաղկով
Վիշտս մոռացել, դաթձել եմ գինով.
Արդյոք ե՞րբ պիտի նոր գարուն բացվի
Ծոցում հայրենի իմ ժողովրդի։

Ո՞վ արդյոք պճնեց այսքան անթերի
Հայոց աշխարհի ծառը ծիրանի։

12 ապրիլ 1990

ԿԱՐՈՏԱԽՏ

Ուրախ եմ անչափ, որ տուն եմ դարձել,
Վերադարձել եմ կարոտով անհուն,
Ծանոթ ջերմությամբ իմ սիրտն է լցվել,
Երանության մեջ եմ ես թևածում։

Աշխարհ եմ շրջել, օվկիաններ կտրել,
Հարազատ մի վայր քեզ պես չեմ գտել,
Քանի՜ դոներ եմ, շփոթ, ես թակել,
Բայց միշտ հուսախաբ՝ քե՛զ վերադարձել։

Ծովերն աշխարհի իրար են նման,
Լճեր, անտառներ, գետեր ու ձորեր,
Ամեն ինչի մեջ ես քե՛զ եմ փնտրել,
Օ՜հ, դու ուրիշ ես, չկա՛ քեզ նման։

Այս ի՞նչ կարոտ է ինձ միշտ տուն կանչում,
Միթե կա՞նչն է սա հողի, պատմության,
Որ հասնելով ինձ աշխարհի ծայրում՝
Զարչարյալ... օրհնյալ իմ տունն է բերում։

19 մայիս 1990

ՄՂՁԱՎԱՆՋ

Զանգակի նման հնչում է անվերջ
Իմ սրտի խորքում, գիտակցության մեջ,
Մոր կանչի նման աղու, սրտալի,
Կանչը իմ հողի և ժողովրդի։

Նյու Յորքի նման հրաշք քաղաքում
Ես չունեմ հանգիստ, և՛ քուն, և՛ դադար,
Անվերջ ձգտում է իմ հոգին դեպ քեզ,
Ուզում է լինել գրկում քո խոով։

Խոովքի մեջ ես, չունես դու հանգիստ,
Երկի՛ր Նաիրյան, վիրավոր, ցավոտ,
Արդյոք ե՞րբ պիտի առավոտ բացվի,
Գիշերն այս դառնա օր արարումի։

11 մայիս 1990

ՀԻՎԱՆԴ ԸՆԿԵՐՈՋՍ

Հիվանդ ես դու ու վիրավոր,
Քո կրծքի տակ ցավն է ծվարել
Եվ կրծում է, գերում անվերջ՝
Օրըստօրե հյուծելով քեզ։

Դու սիրում ես կյանք ու վայելք,
Խինդ ու ծիծաղ, լավ ընկերներ,
Ցավիդ խորքում հուսահատ չես,
Հույսն է քեզ լիցք, եռանդ տալիս։

Առանձնության պահին սակայն
Հուսալքվում, թառամում ես,
Ծանր վիճակդ ես հասկանում,
Լալիս, հիշում օրերդ հին։

Դու վիրավոր, քաղցրիկ թռչնիկ,
Լույս թևերդ խանձըվել են,
Էլ չես կարող ճախրել երկինք,
Ո՞ւր ես, հրա՛շք, ե՛կ, հարուցի՛ր։

12 մայիս 1990

ԵՍ ԵՄ ՄԵՂԱՎՈՐ

Արձակի՛ր քո ծառային
Կապանքներից տևական,
Ոսկի վանդակն իմ փշրի՛ր,
Հզոր թև՛ տուր թռչելու։

Թրթուրի պես հյուսեցի,
Մետաքս խոզակ կապեցի
Ու իմ շինած պատյանում
Ես ինձ հավետ բանտեցի։

Այժմ ոչ մի ելք չունեմ,
Մոլորվել եմ, շփոթվել,
Հույսի լաստերս անգամ
Ալքերի մեջ եմ կորել։

Սրտիս վրա ծանրացած
Այս ի՛նչ վիշտ է, Տե՛ր Աստված,
Ոչ ոքի չեմ մեղադրում,
Մեղավոր եմ, գիտեմ ես։

13 մայիս 1990

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ

Ովքեր սուր են վերցնում, սրով կընկնեն։

Մատթ. 26. 52

Զենքդ վա՛յր դիր դու, էլ մի՛ բարձրացրու,
Երբեք մի՛ դարձիր եղբայրասպան դու.
Զենք բարձրացնողը զենքով էլ կընկնի,
Ի՞նչ է օգուտը քո բռնած զենքի։

Երբ թշնամին է ձգտել մեզ գերել,
Մենք պայքարել ենք, անվերջ ճակատել,
Մեր ազատության ճամփան հարդարել,
Մեր տան պատիվը փառքով պաշտպանել։

Ոսոխը երբեք, երբե՛ք չի կարող
Մեր կամքը փշրել, մեզ ստրկացնել.
Բավ է, որ սիրենք հողն այս սրբազան,
Անցյալի փորձով կերտենք ապագան։

Հիմա պայքար է համայն աշխարհում,
Թե ով կստեղծի նոր կյանք սխրալի.
Իմաստուն լինենք, երկիրն այս պճնենք,
Դրախտ դարձնենք մեր հողն հայրենի։

Զենքդ վա՛յր դիր դու, էլ մի՛ բարձրացրու,
Զենքի փոխարեն մի՛տքդ զորացրու,
Քո բարօրության համար դու տքնի՛ր
Եվ աշխատանքում միշտ հաղթո՛ղ եղիր։

Եթե ոսոխը ձեռքն իր բարձրացնի,
Մեկ մարդու նման դեմ կկանգնենք մենք,
Մեր հավատն ոչ ոք չի կարող փոխել,
Մենք մեր հավատո՛վ ենք վերածնվել։

Քաջերը բնավ նախ չեն հարձակվում,
Հանդարտ են գործում և չեն այլայլվում.
Լեռներիդ նման խաղա՛ղ եղիր դու
Ու ձորերիդ պես՝ գաղտնապահ ու խոր։

20 մայիս 1990

ՆՈՆԵՆԻՍ

Առավոտյան նոնենիս
Արևից շող է ըմպել,
Երկնի անթիվ աստղերից
Կայծ ու կրակ ստացել.
Տերևներում մուգ-կանաչ
Հազար լապտեր է վառվել,
Ո՞վ է թաքուն լույս սփռել
Նոնենուս մեջ գանգրահեր։

Բարկ արևից երկնքի
Նա իր ավիշն է ըմպել,
Կարմիր, բոսոր ծաղիկներ
— Մեկ-մեկ հրդեհ, մեկ-մեկ կայծ—
Թաքուն գիշերվա մթնում
Աստղերից են, տե՛ս, պոկված
Տոնածառ է նոնենիս՝
Գարնան քրքում մեղեդի։

Պիտի հրդեհն այս դառնա
Հյութեղ պտուղ երկնային՝
Պարփակած իր պատյանում
Մի ողջ աշխարհ կենսատու։
Հող ու ջրով իմ երկրի
Նոներս հասուն, կարմրաթուշ,
Աշնան բերքի հավաքում
Դառնան զարդեր սեղանի։

7 հունիս 1990

ՎՇՏԻՑ՝ ԲԵՐԿՐԱՆՔ

Մանրուքներով կյանքի դու քեզ մի՛ խեղդիր,
Անհուսության մեջ էլ մի լույս կա, գտի՛ր,
Տառապանքը թեև կրծում է հոգին,
Բայց տեղ բացում երջանկության խորհրդին։

Սիրո վիշտը կամ հաճույքն է նույնքան խոր,
Անծանոթի տված ՝անեծքն է անզոր,
Իսկ սրտակցի առթած ցավը՝ ահավոր,
Քաղցր խոսքով, մի մեղմ ժպտով փարատվող։

Երբ հատնում է ձեթը սիրո ճրագում,
Մխում է այն, առկայծում ու խավարում.
Թող չսպառվի ձեթը սիրո մեր սրտում,
Որ չկորչեն խավարի մեջ դրախտներ։

Այս աշխարհում սերն է հավերժ տիրական,
Աղբյուր է նա երջանկության, հաշտության,
Սիրո պայծառ, լուրթ երկնքում են ծնվում
Հույսի աստղեր, ծիածաններ բազմազան։

Մանրուքներով կյանքի դու քեզ մի՛ խեղդիր,
Տառապանքի՛ մեջ էլ մի լույս կա, գտի՛ր...

5 հուլիս 1990

ՍՊԱՍՈՒՄ

Ինչո՞ւ քեզ եմ սպասում,
Ուր էլ լինեմ աշխարհում։
Աչքերս հառել եմ հեռուն
Հորիզոնին՝ հուսավառ։

Դու ամպերի՞ց ես գալու,
Թե՞ լեռներից ձյունառատ,
Վստահ եմ, գալու ես դու
Ասուպի պես լուսացայտ։

Ես միշտ պատրաստ պիտ լինեմ
Քո գալստյան դիմավոր,
Ու նոր կյանքով պիտ լցվեմ՝
Փառքիդ շողքով լուսավոր։

27 հուլիս 1990

Ս Ֆ Ի Ն Ք Ս

Ո՞ւմ ես արդյոք սպասում՝
Երկար դարեր դու նստած
Ճամփաների բերանում,
Հսկող, դիտող դու քանդակ:

Հողմերի՞ն ես սպասում՝
Թեժ արևից բռնկված,
Թե՞ ժամանակն ես չափում,
Ողջույն առնում արևից:

Երկար դարեր են անցել,
Դու նստել ես անվհատ,
Քանի՞ հազար դու ուղտեր
Եվ քարավան ես հաշվել:

Դու նստել ես ճամփեքին
Լուռ ու խոհուն հայացքով,
Ժամանակն է քո դեմքին
Քսվում, գնում հապճեպով:

Հողմ ու անձրև քեզ շոյում,
Ճակտիդ կնճիռն են սրբում,
Ժամանակի դու վկադ,
Հող ես դառնում աննկատ:

26 սեպտեմբեր 1990

ԵՐԳ ԱՐԵՎԻ

Դաշտերիս անծայր՝ մառախուղ իջավ,
Չկա հորիզոն հայացքս ուղղելու.
Ի՜նչ սահմանափակ աշխարհն է դարձել
Հնքն անգամ հոգուս կարծես է հանգել:

Տառապանքն եկել, արևս է ծածկել,
Ես՝ արևասերս, մոայլ եմ դարձել,
Բացե՛ք, դուրս հանեք մոայլը հոգուս,
Ես արևս կուզեմ, արևս քաղցրատես:

Հոկտեմբեր 1990

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Իմ հավատի օրրանն ես դու, Երուսաղեմ,
Իմ երգերի թռիչքն ես դու, Երուսաղեմ,
Հող տիրակոխ, Տիրոջ աչքով դիտված քաղաք,
Երուսաղե՜մ, Երուսաղե՜մ երկնաքաղաք:

Ի՞նչ բառերով գեղեցկությունդ գովերգեմ,
Ամեն մեկ քար, ամեն անկյուն սուրբ է ինքան,
Իմ հույզերի ծովն եմ ընկել՝ թովված քեզնով,
Ես՝ երանկպս, քայլում եմ քո փողոցներով:

Ի՞նչ փույթ, սակայն, եթե մարդիկ չեն ըմբռնում
Քո արժեքն ու սրբությունը, Երուսաղեմ,
Իմ հավատի աղբյուրն ես դու հավերժահոս,
Երուսաղե՜մ, դու հարության հույսի՛ փարոս:

29 սեպտեմբեր 1990

Քնար Հովվական

ՀՐՈՎ ԱՆՄԱՀ ՎԱՐԴԱՆԱՆՑ

«Ոգի առաւել է քան զմարմին»
(Ավետարան)

Ոգին անմահ Վարդանանց
Երկար դարերի խորքից
Ջերթ անթեղված հուր առկայծ
Նոր բոցով է ճառագում:
Բազում դարերի խորքում
Նա չի հանգել, սպառվել,
Այլ մեր կյանքից անբաժան՝
Իբրև նշխար մնացել:

Նահատակներն Վարդանանց
Կյանքից կյանքի են կոչվել,
Մահվամբ մահվան են հաղթել
Իրենց արյան հեղումով,
Դարերի հետ սրբացել,
Ջերթ ադամանդ են փայլել,
Ոգու աղբյուր են դարձել,
Սերունդներին կյանք տվել:

Վատը երկար է փորձել
Ջնջել ազգն իմ հայկազյան,
Մեզ անվերջ է կողոպտել,
Մեր կայքն ու ինչքն է կորզել,
Քիչ անգամ է հաջողվել
Նրան՝ ընկճել Հայ հոգին.
Մարմնի մահվամբ չենք մեռնի,
Ոգու մահն է սոսկալի:

Մեր նախնիներն ասել են՝
— Ոգու հուրն է կարևոր,
Քան կրակը բորբոքվող—
Հուրը հոգու ոգեղեն
Սրից ավել է կտրուկ,
Վարդանանք մեր քաջարի
Հոգու հրով շիչուցին
Հուրը Մազդեզ հավատի:

Ավարայրի ճակատում
Հազար և երեսուն վեց
Հայ մարտիկներ զոհվեցին,
Մեր հողն արյամբ ներկեցին,
Ապա շատեր աքսորի
Դաղրն ճամփից քայլեցին,
Հայրենյաց փառքի համար
Իրենց կյանքը մատուցին:

Քաջերի հետ զոհվեցին
Հայոց տիկնայք փափկասուն,
Ուրախությամբ միացան
Ավարայրի քաջերին:
Տառապանքով մարմնական
Ոգին իրենց ամրացրին,
Դարձան զոհեր գիտակից
Սրբոց մեր պսակակից:

Վարդանանք մեր դեռ կապրեն,
Թեև մարտում զոհվեցին,
Քաջի ոգին չի մեռնի,
Աղբյուր է նա նոր կյանքի:
Քանի՞ անգամ իր կյանքում
Հայոց ազգն է պայքարել,
Իր սրբությանց պահպանման
Համար արյունն իր հեղել:

Այժմ արի հայկազունք
Աշխարհի չորս ծագերում
Ոսոխի դեմ են կռվում
Ավարայրի նոր դաշտում:
Դարավոր ա՛զգ իմ հայկյան
Նոր ավյունով Վարդանյան
Իջի՛ր անվախ Ավարայր,
Նախնյաց փառքով պսակվիր:

7 փետրվար 1991

ԱՌԱՎՈՏ ԼՈՒՍՈ

Առավոտյան արևի պես
Քո օրհնությունն առատ լինի,
Լեռ ու հովիտ լցվեն ծաղկով,
Դաշտ ու անտառ՝ առատ բերքով:

Առավոտյան օդի նման
Կյանքը դառնա քաղցր ու բարօր,
Մարդիկ ապրեն եղբայրաբար՝
Իրար բարին միշտ կամեցող:

Առավոտյան լույսի նման
Իմաստության լույսը բացվի
Ամեն տնում, ամեն հոգում,
Մարդիկ դառնան ազնիվ, բարի:

Խաղաղության լույս թող ծագի
Մեր աշխարհում, մեր սրտերում,
Առատորեն թող բաշխվի
Աստվածային սեր, օրհնություն:

17 օգոստոս 1991

ԱԾՆԱՆԱՅԻՆ

Աշնան բերքով ծանրացել,
Նոնենիս է կռացել,
Ծանր թևքերն իր կախել:
Բազում շռայլ գույներով
Տերևներն է իր նախշել,
Նոր զգեստ է նա հագել:
Հովն է զվարթ թափառում,
Նոներս օդում օրորում,
Կարմիր վառվող լապտերներ,
Լույսեր՝ կաթող երկնքից:

Երկնի շռայլ շողերից
Հյութ է խմել ու հարբել,
Լույսի պարփակման խինդից
Նա իր կուրծքն է պատառել:
Կարմիր-բոսոր հակինթներ
Խումբ-խումբ շարվել են հերթով,
Հասուն հյութեղ ցոլքերով:
Ո՞ր քնքուշ ձեռքը արդյոք
Մարգարիտներ հավաքել,
Նոնենուս մեջ է շարել:

10 սեպտեմբեր 1991

ՈՂՈՐՄԱԾԱՑ ԵՐԱՆԻ

Այս աշխարհում ողորմածն է երջանիկ,
Ունեցածն իր նա բաշխում է բոլորին,
Ծանոթին ու անծանոթին է օգնում:
Ունեցածից թաքուն կերպով բաժանում:

Կիսում է նա նույնիսկ պատառն իր բերնի,
Լքված, անտեր, անտուն մարդուն խնամում,
Հոգով թեթև՝ փառք է տալիս Արարչին,
Որ ինք դարձավ միջոց բարու տարածման:

Ողորմածի ձեռքը բնավ մի՛ բռնիր,
Մի՛ արգելիր, որ նա օգնի՝ ում կամի,
Մենք չգիտենք կարգը կյանքի բնական,
Ողորմությամբ՝ ողորմություն են գտնում:

Ողորմություն ու գթություն տարածի՛ր,
—Գալիք կյանքի խավար բավիղն ո՞վ գիտե—
Որքա՞ն դավ ու արհավիրք կա մեզ պահված,
Բարիք արա, որ դու բարո՛ւն հանդիպես:

Հիշի՛ր, մի օր ողորմած մի ձեռք բարի
Նեղ օրերիդ օգնել է քեզ ու փրկել.
Քո՛նն է հերթը ողորմության, ողորմի՛ր,
Չքավորին, խոնարհվածին ձե՛ռք մեկնիր:

Միակ գթածն ու ողորմածն է Աստված,
Ինչե՛ր է նա մեզ պարգևում գաղտնաբար,
Եթե կամիս քո արարչին նմանվել,
Փորձի՛ր նրա կյանքի ուղուն հետևել:

11 սեպտեմբեր 1991

ԽՆԴՐԱՆՔ

Գետաշենի և Մարտունաշենի անմեղ զոհերի անթառամ հիշատակին:

Խորքում գիշերվա, մի մոմի լույսով
Ծնրադրել եմ քո խորանի առաջ,
Աղոթում եմ ես, անվերջ պաղատում,
Հիշում զոհերին ջահել ու ջիվան:

Արցունքն աչքերիս ակում չորացավ,
Սիրտս զգայուն անզգա դարձավ,
Թռիչքն իմ հոգու կրծքումըս բանտվեց,
Կանչը աղերսի կոկորդումս խեղդվեց:

Բառերըս անգամ դարձան անիմաստ,
Շփոթվել եմ ես, դարձել եմ խելառ.
Խոսքերն աղոթքիս դարձան կցկտուր,
Կորցրել եմ ես նպատակ, իմաստ:

Որքա՞ն, դեռ որքան դու թույլ պիտի տաս,
Որ բզկտեն մեզ գայլերն անհագուրդ,
Հոտիդ պահապան հովիվներն անգամ
Դարձան վիրավոր, ընկան ու կորան:

Ե՞րբ պիտի դարձնես մեզ դեմքդ հույսի,
Շողքովդ զարդարես մեր հոգին մռայլ,
Ե՞րբ պիտի արդյոք քո իմաստությամբ
Պճնես մեր հոգին, պարգևես կորով:

Քև՛զ ենք սպասում անհամբեր հոպսով,
Զգալու դեպքում գեթ շփոթեցրու՛
Մեր ենգ թշնամուն, տա՛ր նրա՛ն հեռու,
Մենք ձանձրացել ենք սուգ, մահ տեսնելուց:

Եվ նրանց, ովքեր գործիք են չարին,
Կամ չարն է նրանց արծաթապատել,
Իմաստություն տուր, տուր զգաստություն՝
Հասու դառնալու իրականության:

Աշխարհն ողջ գիտե, որ երկրագնդում,
Հակառակ գործող հազար դավերին,
Հակառակ բոլոր բռնություններին,
Արդարությունն է միշտ հաղթանակում:

22 մայիս 1991

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

Հողի նման օրհնվես դու անձրևներով,
Երկրի նման ծաղկազարդվես գարնան շնչով,
Բարիքներով բյուր, երկրային առատանաս,
Գեղեցկությամբ աստվածային պայծառանաս:

Դառնաս արև լուսապայծառ մեր աշխարհում,
Հույս տարածես հուսահատված հոգիներում,
Երդիկ դառնաս անտուն-անտեր լքվածներին,
Կենաց մեղրով դու քաղցրացնես քիմքը խեղճին:

Մոլորյալին, սխալների բարդույթի մեջ
Խճճվածին ազատագրես կապանքներից,
Աղբյուր դառնաս ուրախության հուսահատին,
Թևեր դու տաս ազատության ձգտողներին:

17 փետրվար 1991

ԲԱԺԱՆՈՒՄ

Բաժանումի այս պահին
Սիրտս հանդարտ կարյունի.
Կապը անխախտ միության
—Այս օրերում ամրացված
Կարծես անտես ձեռքերով—
Թուլանում է, քանդվում.
Վշտի պիքն է ելնում,
Աչքերիս արցունք դառնում:

Առանձնապես ոչ ոքի
Ես չեմ սիրել ժողովում,
Ոգին այստեղ թևածող
Բոլորիս է պարուրել,
Նույնիսկ կարծես հոգնել եմ
Երկար-բարակ խոսքերից,
Բայց սիրել եմ այն ոգին,
Որ իշխել է սրտերում:

Վերջինն եմ ես բաժանվում
Հավաքույթի այս վայրից,
Կարծես պարտեզն այս ծաղկանց
Հարվածվել է հողմերից,
Ավերակ է, տե՛ս, դարձել
Անգամ վրանն աղոթքի,
Սակայն ոգին միության
Աշխարհով է տարածվել:

22 փետրվար 1991

ՓՈՔՐԻԿ ՏԻԳՐԱՆՈՒՀՈՒՆ

Եղնիկի նման
Սարերից իջած
Գեղեցիկ աղջիկ:

Դաշտերի միջին
Հազվագյուտ բույրով
Ծաղկած մի ծաղիկ:

Աչքերդ կրակ,
Դու հուր վարդագույն,
Հրդեհ բորբոքուն:

Եվ սրտիդ խորքում
Անեղծ սրբություն,
Թարմություն անհուն:

23 մայիս 1991

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հիանում եմ ես բարձրյալ Աստուծով,
Որքա՜ն կատարյալ է քեզ ստեղծել,
Մեծ Տեսանող է հաստատ նա եղել,
Որքա՜ն նուրբ ճաշակ, զգացմունք, քնքշանք:

Նա միանգամից քեզ չի ստեղծել,
Զերթ քանդակագործ ձեռքերն ու հոգին
Համերաշխորեն է օգտագործել,
Երկար մտորել, ապա արարել:

Իր գեղեցկությամբ է քեզ զարդարել,
Կատարելության է նմանացրել,
Իր պայծառ հոգուց շող է ընծայել
Եվ քեզ զարդարել՝ պայծառակերպել:

Դու, տիպ երկնային, այնքա՜ն կատարյալ,
Դու լուսապայծառ մի հրաշք կերտյալ,
Արարչից բազում շնորհ ստացար,
Դարձի՛ր քո հերթին արարիչ անճառ:

14 մարտ 1991

ՎԱՍՆ ԱՐԾԱԹԻ

«Արծաթսիրությամբ մոլեալ Յուդայ»
(Շարական)

Օրն է հինգշաբթի, ավագ հինգշաբթի,
Ափիս մեջ ահա՛ երեսուն արծաթ,
Երեսուն դրամ Տիբերիոս կայսրից
Ու նախորդներից ժառանգ մնացած:

Նայում եմ տխուր այս դրամներին,
Մտքով սլանում խորքը պատմության,
Որքան ցնցիչ է անդրադարձն անգամ,
Որ այս դրամով դավել է Հուդան:

Ի՞նչ է արժեքը այս արծաթների
Մեր նոր աշխարհում, մեր առօրյայում.
Անդրադառնում եմ և խորը թախծում,
Արծաթն է նորից միջոցը չարի:

Մարդիկ ներկայիս դարձած շատ ագահ,
Ազգ ու ցեղ են, տե՛ս, ազատ վաճառում,
Առանց խղճանքի, խղճահարության
Ձեռքերը իրենց արյամբ շաղախում:

Ես բողոքում եմ իմ ամբողջ հոգով
Մարդկանց դեմ տմարդ, նոր դահիճների,
Որոնք թափում են գետեր արյունի
Եվ մոռացել են օրն դատաստանի:

21 մայիս 1991

ՍԱԿԱՎ ԸՆՏՐՅԱԼՔ

«Եւ գեղեցկացան անապատք մաքուր կուսութեամբ»

Շարական

Լեռների լանջին, ձորերի ծոցին
Լուռ ու խոհական վանք ու անապատ.
Անբառ աղոթքներ, ուխտի կոթողներ,
Հավերժը կյանքին կապող օղակներ:

Վանք-անապատում աղոթքի թևով
Երկինք բարձրացած որքա՜ն պաղատանք,
Տեսիլքով գերված ընծա հոգիներ,
Ջերթ խունկ ծխացող գիտակից զոհեր:

Կուսական գեղով անմեղ հրեշտակներ,
Անբիծ հոգիներ երկնքին ձոնված.
Երկնային փառքի կոչունքին կանչված
Իմաստությամբ լի սակավ ընտրյալներ:

Բանավոր զոհեր, անընդմեջ վառվող
Ջահեր ու մոմեր՝ լույս ու սեր ստեղծող.
Ձեր նվիրումով ու զոհողությամբ
Կյանքն իմաստնացնող անմահ վկաներ:

Ժայռերի ծոցում ծլած ծաղիկներ.
Սրբության գրկից քաղված շուշաններ,
Դուք գեղեցկությունն մաքուր, անշպար,
Փոթորկոտ կյանքում հույսի փարոսներ:

25 հունվար 1991

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳ ՀԱՎԱՏՈ

Տեսիլք հավերժական 5
Հավերժ երախտավորին 9
«Մի մերձենար յիս» 14
Խոհ ծննդյան 16
Սուրբ Հակոբ 18
Տիրամայր 20
Հոգևոր խոհեր 21
Աղերս 24
Քարե աղոթք 25
Աղոթք առ Էջմիածին 26
Ավագ շաբաթվա խոհեր 27
Ավանդ հավերժական 29
Առ հարուցյալն 46

ՀՈՂ ՀԱՅՐԵՆԻ

Հերոսական 49
Բարբառ հայրենի 55
Զմռան երգ 56
Գարուն 57
Մոր արցունքը 58
Սևան 59
Մասիս 60
Բարի լույս 61
Սեր 66
Երևանին 67
Գովերգ 68
Արարատ 69
Հող հայրենի 70
Մանթաշի հովտում 71
Պանդուխտ քաջին 72

ՀՈՎՎԱԿԱՆ

Գեղարդի ճամփին 77
Հովվական 78

Իմ ճշնին 79
Տարերքի երգով 80
Արփայի հովտում 81
Մոլորված մեղուն 82
Լեմանի ափին 83

ՄՏՔԻ ԹԵՎԵՐՈՎ

Եղբայրություն 87
Տեղերի վանքում 89
Սփոփանք 90
Արարչություն 91
Նրան 92
Նոր տարի 93
Աշուն 94
Զգտում 95
Լոնդոն 96
Լիալուսին 97
Ասիզի 98
Մայրամուտ 99
Հոում 100
Լուսերգ 101
Գիտեմ 102

ՀԱՎԵՐԺ ՊԱՏԱՐԱԳ

Աղետ 105
Բողոք 112
Ռեքվիեմ 115
«Խօսք ընդ Աստուծոյ» 119
Վիրավոր Հայաստանին 120
Բեթինա Լորի 121
Շունչ հարության 123
Մխիթարանք 126
1989 127
Սիրտ իմ 128
Եկ, խաղաղություն 129
Հարություն 130

ՀՈՒՅՍ ԿԵՆԱՐԱՐ

Հույս կենարար 133
Հին կաղնին 134
Փափագ 135
Մարդ 136
Օրհներգություն 137
Հայրենի հող 138
Խոսք երախտիքի 139
Տիրամորը 141
Մոսկովյան մտորումներ 142
Կանչ արդարության 143
Միրանի ծառ 144
Կարոտախտ 145
Մղձավանջ 146
Հիվանդ ընկերոջս 147
Ես եմ մեղավոր 148
Եղբայրական 149
Նոնենիս 151
Վշտից բերկրանք 152
Սպասում 153
Սֆինքս 154
Երգ արևի 155
Երուսաղեմ 156

ՔՆԱՐ ՀՈՎՎԱԿԱՆ

Հրով անմահ Վարդանանց 159
Առավոտ լուսո 162
Աշնանային 163
Ողորմածաց երանի 164
Խնդրանք 165
Սուրբ Հոգի 167
Բաժանում 168
Փոքրիկ Տիգրանուհուն 169
Շնորհակալություն 170
Վասն արծաթի 171
Սակավ ընտրյալք 172

ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ

ՔՆԱՐ ՀՈՎՎԱԿԱՆ

Խմբագիր՝ Ա. ԱՅՎԱԶՅԱՆ

Գեղ. խմբագիր՝ Ֆ. ԿԱՐԱՂՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Դ. ՍԻՐԵԿԱՆՅԱՆ

Վերստուգող սրբագրիչ՝ Զ. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ